Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2204
24559

1362

84
Z-66

2011

596
798.

84
3-66 Ա

ԼՈՒԲՐԻՑԻԱ ՊՕՐՃԻԱ

Ի Վ.ԻՔԹՕՐ ՀՈՒԳՈՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂԴԻԱՐԻՆ ՐՆԱԳՐԻ

ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ALEP-SYRIE
Printed in Turkey
2003

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԷՏԷԵԱՆ

Բէշիկթաշ Ճոպոքէսի, թիւ 50.

1862

547

619
39 9

Printed in Turkey

ԼՈՒՍԻՍՏՐԱՏԻՈՆ ՊՕՐՃԻՍ

ԱՆՁԻՆՔ

Տօնը Լուսիսրատեան Պօրճիսի
Տօն Ալեքսանդր Տէսթ
Ճենարօ
Կուիպէթ
Մանթիս Օրսինի
Ժէքօ Լիվերէթօ
Տօն Մէքսիմիլիան Կազելլա
Ասէնտիս Փեթրուզի
Օլոֆերնօ Վիթելլօզօ
Բուսթիկելլօ
Ասթոլֆօ
Նեկրոնի իշխանուհի
Նաւիրակ մը
Կրօնաւորներ
Իշխաններ
Մանկաւ իկներ. Պահապաններ։

Վենետիկ. - Փետրար. - 15...

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱՏԻՆՔ Ի ՎԵՐԱՑ ՆԱԽԱՏԱՆԱՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Տեսարանն է՝ ի Վենետիկ, Պարդարիկօ դպաշատին բակին մէջ. գիշերային տօնախմբութեան մէջ են. դիմակաւորներ թատրին ելոյ կը շրջեն։ Բակին երկու կողմը դպաշտը փառաւորապէս զարդարուած եւ շուսաւորուած է, ու նուագարանները կը հնչեցնեն։ բակին վերի կողմը Ջուկքա շքանցքը կը տեսնուի. որուն վրայ մութին մէջ երբեմն երբեմն դիմակաւորներով եւ դերասանիներով շեղուն կօնտօշաներ՝ կ'անցնին. որոնց ամեն մէկը թատրոնին ներքին կողմէն կ'անցնին երբեմն ուրախաշի եւ երբեմն ցաւագին եղանակներ նուագելով, որոնց ձայնը՝ որչափ կը հեռանայ՝ աստիճանաբար՝ կը նուազի։ Ներքին կողմը՝ վենետիկը կ'երեւայ շուսանին շուսաղը։

Էքեղ հագուած երիտասարդ իշխաններ դիմակներն ձեռքերնին բռնած բակին վրայ կը խօսակցին։

ԿՈՒԻՊԷԹ. ՃԷՆԱՐՕ՝ հարիւրապետի ըդգեստ հագած, ՏՕՆ ԱՓՕՍԹՕԼՕ ԿԱԶԷԼԼԱ, ՄԱՆԹԻՍ ՕՐՍԻՆԻ. ԱՍԷԱՆԻՍ ՓԷԹՐՈՒԶԻ. ՕԼՕՖԷՐՆՕ ՎԻԹԷԼԼՕԶՕ. ԺԷՔՕ ԼԻՎԷՐԷԹՕ.

Օլօֆերնօ. Այս դարուս մարդիկը այնպիսի սոսկալի եղեռնագործութիւն-ներ կ'ընեն, որ այն տիկնոջ խօսքը անգամ չը լսեր. բայց ստուգիւ ասկէ աւելի աղէտալի և աւելի դաղտնի բան մը պատահած չէ երբէք։

Ասթանիս. Այո, անյայտ մարդոց ձեռօք գործուած անյայտ գործ մի է։

Ժէքօ. Ստոյգ է, պարոններ. իմ բարձրապատիւ Քարիալ կարդինալ մօրեղբայրս պատմեց ինձ։ Քարիալ

կարդինալը կը ճանչնաք, որ Գաղղիոյ Կարոլոս Ը. թագաւորին դէմ ըլլալու պատերազմին պատճառաւ Բիարո կարդինալին հետ վէճ ունեցաւ։

Ճէնարո, յօրանջելով. Ոհ, մտիկ ըրէք, Ժէփօն մեզ պատմութիւն պիտի պատմէ. շիտակը ըսեմ, ես լսելու ատեն չունիմ, ըստ որում խիստ խոնջեցած եմ։

Մաֆիո. Ըս խօսքերը քեզ օգուտ մը չունին, այնպէս չէ՞, Ճէնարո, կը հաւատամ, քանզի դուն դիպուածով հարիւրապետ մ'եղած ես, և կըրած անուանդ կեղծ է։ Ոչ հայրդ կը ճանաչես և ոչ մայրդ։ Այուր բռնելու ենղանակէդ ազնուական չըլլալդ կը յայտնես. ազնուականութեդ վրայօք այնչափ կրնանք ըսել որ առիւծի պէս կը պատերազմիս։ Մենք նիզակակից ընկերք ենք, և ես զքեզ նախատելու համար չեմ ըսեր։ Դուն Ռիմինիի մէջ իմ կեանքս ազատեցիր, ու ես Վ. Լիէնցիոսի կամուրջին վրայ քուկդ ազատեցի. անկէ 'ի վեր երդում ըրած ենք որ թէ վտանգի և թէ սիրահարութեան մէջ հարկաւոր եղած ատենը թշնամիներէն վրէժ առնելու համար իրարու պիտի օգնենք։ Ըստեղանշմար մը գուշակեց որ մենք երկուքնիս ալ նոյն օրուան մէջ պիտի մեռնինք, ուստ գուշակութեան համար անոր տասը ոսկի տուինք։ Մեք բարեկամ չեմք, այլ եղբայր։ Ըյսու ամենայնիւ գուն երջանիկ ես որ ամեն արկածներէն ազատ ըլլալով՝ ամենևին հոգ չես ըներ դիտնալու թէ ինչեր կ'ըլլան և թէ ինչ պատահեր է. քեզի համար բաւական է որ պատերազմի համար մարդիկ զըտնուին և զուարճութեան համար կանայք։ Ընտանեկան և քաղաքական պատմութիւնները ինչ պիտի օգտեն քեզ, որ պատերազմի դաւակ ըլլալով, ոչ քաղաք ունիս և ոչ ընտանիք։ Կը տեսնեմ, Ճէնարո, մեր գործերը իրարմէ որչափ տարբեր են. մենք իրաւունք ունինք մեր ժամանակը պատահած չարիքը հոգերնիս ընել։ Մեր ծնողքը նոյն աղէտին մասնակից եղած են, և գրեթէ մեր բոլոր ընտանիքը դեռ կը հաբըստահարուին։ — Պատմէ դուն մեզ գիտցածդ, Ժէփօ։

Ճէնարո, ԱԼՈ՝ ԻՄԸ ՎՐԱՅ ԿԷՆԱՅ, ՈՐ ՀՆԱՆԱԼ ԿԸ ՅԱՅՏՆԷ. Ժէփօն պատմութիւնը լմնցընելուն պէս զիս արթնցուցէք։

Ժէփօ. Մտիկ ըրէք, հազար չորս հարիւր ինսնսուն չեմ յիշեր քանիին...

Կուդէթա, Խոպրոնէն մէկ անկիւնը նստած. Ը՛յո՛, հազար չորս հարիւր ինսնըսուն եօթին։

Ժէփօ. Շիտակ է. հազար չորս հարիւր ինսնսուն եօթին. Հինգշաբթի լուսնալու Ողբեքշաբթի իրիկունը...

Կուդէթա. Ո՛չ, Ողբեքշաբթի լուսնալու Երեքշաբթի իրիկունը։

Ժէփօ. Իրաւունք ունիս։ Նոյն գիշերը, Տիբերիսի նաւավարներէն մէկը, որ իւր ապրանքը պահպանելու համար իւր նաւակին մէջ պառկեր էր, սոսկալի բան մը տեսաւ. Ս. Երրորդութիւն եկեղեցիին քիչ մը վարօքը։ Կէս գիշերը գրեթէ հինգ ժամ անցեր էր. նաւավարը մթութեան մէջ եկեղեցիին ձախ կողմի փողոցէն երկու մարդոց ելլելը նշմարեց, որոնք անհանգիստ կերպով ասդիս անդին հետիոտն կը

պատուէին. ասոնցմէ եաթը երկու հոգի երեցան, և վերջապէս երեք հոգի ալ յառաջացան, ընդ ամենը եօթը հոգի։ Ասոնցմէ մէկը միայն ձիու վրայ էր, և դիշերը բաւական մութ էր։ Տիբերիսի վրայ նայող պատուհաններէն միայն մէկ պատուհանը լուսաւորեալ մնացեր էր։ Եօթը հոգիները գետին եղերքը մօտեցան. ձիաւորը ձիուն դաւակը Տիբերիսի կողմը դարձուց, ան միջոցին նաւավարը որոշ տեսաւ որ դաւակին մէկ կողմէն գիսաց եալ մարդու սրունքներ կախուած էին, և միւս կողմէն՝ գլուխ մը և թեւեր։ Ինչ ատեն ընկերներէն մէկ քանին փողոցներուն անկիւնները կը հսկէին, անոնցմէ երկուքը դիակը առին, երկու երեք անգամ ուժով տատանեցին, և Տիբերիսի մէջ նետեցին։ Դիակը ջուրին մէջ խյնալուն պէս՝ ձիաւորը հարցմունք մը ըրաւ, որուն միւսները պատասխանեցին, Այո՛, տէր իմ։ Ընտեղն ձիաւորը Տիբերիսի կողմը դարձաւ, և ջուրին վրայ սև բան մը տեսնելով՝ հարցուց թէ ինչ է։ Մեռնող իշխանին վերարկուն է, տէր իմ, պատասխանեցին միւսները, և անոնցմէ մէկը աս վերարկուին վրայ քարեր նետեց ու զան ջուրին տակը տարաւ։ Աս ընելէն ետև՝ ամենքը ընկերութեամբ հեռացան և Ս. Յակոբի ճամբան զարկին։ Ահա նաւավարին տեսածը այսչափ է։

Մաֆիս. Ինչ տխրալից դիպուած է այդ, ջուրը նետածներին արդեօք երեւելի մէկներն էր. ինչ զարմանալի բան որ թէ մարդասպանը և թէ մեռեալը նոյն ձիուն վրայ էին։

Կուդէթա. Ձիուն վրայ եղողները երկու եղբարք էին։

Ժէֆս. Այո՛, դիակը Յովհաննէս Պօրճիան էր, և ձիաւորը անոր եղբայրը Կեսար Պօրճիան։

Մաֆիս. Ո՛հ, Պօրճիաները ինչ դիւական ընտանիք մ'են եղեր։ Բայց ըսէ, Ժէֆս, ինչո՞ւ եղբայր մը իւր եղբայրը կ'ըսպաննէ։

Ժէֆս. Ձեմ կրնար ըսել, աս սպանութեան պատճառը այն աստիճան զզուելի է, որ անոր վրայ խօսիլն անգամ մահացու մեղք մ'է։

Կուդէթա. Այս ըսեմ ձեզ պատճառը, վալանսի Կարդինալ Կեսար Պօրճիան զիւր եղբայրը Կանտիայի դուքս Յովհաննէսը սպաննեց, ըստ որում երկուքնին ալ նոյն կինը կը սիրէին։

Մաֆիս. Եւ ո՞վ էր այդ կինը։

Կուդէթա, Միշել Լոպրոնին Մէկ անկ-նը. Իրենց քոյրը։

Ժէֆս. Բաւական է, պարոն, այն հրէշ կնոջ անունը մի տար, մեր ամենուս ընտանեաց ալ մէկ մէկ խորին վէրքեր պատճառած է։

Մաֆիս. Աս գործին մէջ մէկ արդար մ'ալ չկա՞ր։

Ժէֆս. Այո՛, անոր հօր անունը միայն պիտի տամ, որ է Յովհաննէս Պօրճիա։

Մաֆիս. Աս տղան անշուշտ հիմա մեծցած է։

Օշոֆերնս. Ընիկա անուանեալ եղաւ բոլորովին։

Ժէֆս. Ձի գիտցուիր թէ Կեսա՞ր Պօրճիան զան մօրմէն պահեց, թէ մայրը Կեսար Պօրճիայէն պահեց։

Տօն Ֆիսիոշօ. Թէ որ մայրն է պա-

հողը՝ շատ աղէկ է ըրեր։ Քանի զի Վալանսի Կարդինալ Կեսար Պօրճիան Վալանթինի դուքս ըլլալէն՝ ի վեր՝ իր Յովհաննէս եղբայրէն զատ, ինչպէս որ գիտէք, իր երկու քեռորդիները, Կիֆրի Պօրճիայի զաւակները, և իր հօր եղբօրորդի Ֆրանչիսկոս Պօրճիա կարդինալը սպաննել տուաւ։ Այս մարդը կ'ուզէ դաղանաբար իւր բոլոր ազգականները ջնջել։

Ժէֆո. Ի՞նչ կը զարմանաք։ Կ'ուզէ որ իրմէ զատ մէկը չգտնուի Պօրճիայի ընտանեաց մէջ, և պապին բոլոր ինչքը ինքը ժառանգէ։

Աբանիս. Ի՞նչ էր պատճառը, Ժէֆո, որ նոյն միջոցին Ս. Սէքսթոսի մենաստանը քաշուեցաւ նոյն կինը, որուն անունը չես ուզեր տալ։

Ժէֆո. Որպէս զի Յովհաննէս ԸՍֆորցա իր երկրորդ ամուսինէն զատուիլ կարենայ։

Մաֆիս. Այն դիպուածը տեսնող նաւավարին անունը ինչ է։

Ժէֆո. Չեմ գիտեր։

Կուդէթա. Անոր անունը Գէորգ Սքիալոն էր, որ Տիբերիսէն Ուիսքէթա փայտ կը կրէր։

Մաֆիս, կամաց մը Աչանիոյին. Տես աս Սպանիացին մեզմէ աւելի մեր գործերուն վրայ տեղեկութիւն ունի։

Աբանիս. Իմ կարծիքս՝ Կուդէթան կասկածաւոր մէկն է, չը լլայ որ ասկէ աւելի խորունկը երթանք, կարելի է որ խօսակցութիւնս վտանգաւոր հետևութիւն մը ունենայ։

Ժէֆո. Ո՛հ, պարոններ, ինչ ժամանակի հասեր ենք. պատերազմներով, ժանտախտներով և Պօրճիաներ-ով լցուած աս թշուառ Իտալիոյ մէջ կայ մէկը որ ստոյգ ըլլայ թէ վաղը կենդանի պիտի մնայ։

Տօն Ֆիսսթօչիօ. Կարծեմ որ ամենքս ալ ուղեկից պիտի ըլլանք Վենետիկի հասարակապետութեան կողմէն Ֆէերարի դուքսին խնդակցութեան համար ղրկուած դեսպաններուն։ Երբ պիտի մեկնինք Ֆէերար երթալու։

Օլոֆերնօ. Ընչուշտ, վաղը չէ միւս օրը։ Պէտք է գիտնաք որ Թիսֆիսլը և Կրիմանի դեսպան անուանեցան։

Տօն Ֆիսսթօչիօ. Ճէնարօն ալ հետերնիս պիտի գայ։

Մաֆիս. Ընշուշտ, Ճէնարօ և ես իրարմէ ամենևին չենք զատուիր։ Բայց դառնանք պալատը։ — Ճէնարօ, ելիր։ (Ժէֆոյին). Պատմութեանդ մէջ իրաւցընէ քնացեր է։

Ժէֆո. Թող քնանայ։

Ամենքն ալ իջնին մեկնին բոլոր դուռները։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԿՈՒԴԷԹԱ, ՃԷՆԱՐՕ քնացած։

Կուդէթա, ինքնիրեն. Այո՛, ես իրենցմէ աւելի գիտեմ, ինչպէս որ կամաց մը իրարու կ'ըսէին։ Բայց Տօնա Լուքրէցիա ինձմէ աւելի գիտէ, Պ. Վալէնթին Տօնա Լուքրէցիայէն աւելի գիտէ, սատանան Պ. Վալէնթինէն աւելի գիտէ, և Աղէքսանդր Ջ. պապը սատանայէն աւելի գիտէ։ (Ճէնարօյին նայելով) Ինչպէս երիտասարդները կը քնանան։

Տօնա Լուքրէցիա դիմակաւորեալ նեղուած է մինչ, ու Ճէնարօն ոնայած պեռնելով է մօտենայ յոգնաթոռիկամբ և ալնոցուրիկամբ ղան է դիպէ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԿՈՒՊԼԷԹԱ. ՏՕՆԱ ԼՈՒՔՐԻՏԻԱ.

ՃԷՆԱՐՕ՝ բնացած։

Տօնա Լուքրեցիա. Ահաւասիկ, Քնա-ցեր է, անշուշտ աս տօնախմբութեանն խոնջեցած պիտի ըլլայ։ Ինչպէս զ եղեցիկ է։ (Իտալերէն) - Կուպէթա։

Կուդէթա. Քիչմը կամաց խօսեցէք, տիկին։ Հոս Կուպէթա չէ անուն, այլ Պէլլէրանայի կոմս և աղնուական իշխան, դուքսալ Փօնթէքատրաթոյի մարքէզուհին և Կոփօլիի տիկին էք. պէտք չէ որ զմեզ ճանչցընենք։ Ձեր կամքն ալ աս չէ։ Ձեր երկրին մէջ չենք, այլ Վենետիկի մէջ կը գտնուինք։

Տօնա Լուքրեցիա. Սաղդ է, Կուպէթա, բայց աս քնացող երիտասարդէն ուրիշ մարդ չկայ հոս, կրնանք քիչ մը խօսիլ։

Կուդէթա. Շատ աղէկ, բայց ուրիշ խրատ մը ևս ունիմ ձեզ տալու՝ չը լսայ որ դիմակնիդ երեսնէդ հանէք, կրնան գձեզ ճանչնալ։

Տօնա Լուքրեցիա. Ինչ վնաս ունի, թէ որ իմ ով ըլլալս չեն ճանչնար. ինչ պիտի վախնամ անոնցմէ. բայց եթէ զիս ճանչնան, անոնք պէտք են ինձմէ վախնալ։

Կուդէթա. Տիկին, Վենետիկի մէջ կը գտնուինք. ձեր թշնամիները շատ են հոս, և ամբարտաւան թշնամիներ։ Ընդուշտ անոնք Վենետիկի հասարակապետութենէն վախնալով, պիտի չեհամարձակին ձեզ դպչիլ, բայց կը-նան նախատինք մը ընել ձեզ։

Տօնա Լուքրեցիա. Իրաւունք ունիս, բայց իմ անունէս ամէն մարդ կը վախնայ։

Կուդէթա. Միայն Վենետիկցիք չեկան հոս, այլ Հռովմայեցիք, Նէապօլսեցիք, Իսմանիացիք, Լոմպարտացիք, և Իտալիոյ ամէն կողմի բնակիչներէն կը գտնուին։

Տօնա Լուքրեցիա. Իրաւունք ունիս, բոլոր Իտալիա զիս կ'ատէ, բայց պէտք է որ աս ատելութեան վերջ տանք. հիմա յայտնի կը տեսնեմ որ ես չարութիւն ընելու համար ծնած չեմ, այլ իմ ընտանեացս օրինակը զիս ան ճամբան տարաւ։ - Կուպէթա։

Կուդէթա. Հրամայեցէք։

Տօնա Լուքրեցիա. Տալու հրամանները իսկոյն Սփօլէթի կառավարութեան զրկէ։

Կուդէթա. Հրամայեցէք, տիկին. միշտ համեստաբար չորս ջորի և չորս սուրհանդակ պատրաստած եմ։

Տօնա Լուքրեցիա. Կալէա Ռքայօլին ինչ եղաւ։

Կուդէթա. Միշտ բանտն է, հրամանուդ կ'ըսպասեն որ կախեն զան։

Տօնա Լուքրեցիա. Կիֆրի Պուօնտէլմոնթէն ինչ եղաւ։

Կուդէթա. Պատրերկրեայ բանտի մէջ է. տակաւին չհրամայեցիք որ խեղդուի։

Տօնա Լուքրեցիա. Մանֆրէտա տը Վուրզօլան ինչ ըրիք։

Կուդէթա. Օգն ալ խեղդել չետուինք տակաւին։

Տօնա Լուքրեցիա. Սիֆատաքափիան ինչ եղաւ։

Կուղեթա. Ըստ հրամանի ձեր Օ՝ատիկի օրը հաղորդութեան նշխարին մէջ պիտի թունաւորեն զինքը։ Հիմա բարեկենդանին մէջն ենք, տակաւին վեց շաբաթ կայ։

Տօնա Լուբրեցիա. Պետրոս Քափրան ո՞ւր է։

Կուղեթա. Դեռ Փէզարօի եպիսկոպոս և դիւանատան խնամապետ է, բայց ամիս չանցնիր բնաջինջ պիտի ըլլայ. ըստ որում սրբազան պապ հայրերնիս ձեր տրտունջին վրայ զան բռնել տուաւ և Վատիկանի ստորին սենեակներուն մէջ խիստ պահպանութեամբ պահած է։

Տօնա Լուբրեցիա. Կուպէթա, շուտով գրէ սրբազան հայրերնուս որ Պետրոս Քափրային ներէ։ Կուպէթա, Բաբայոլիին, Մանֆրէտի եւ Քուրզօլային, Պուօնտէլմոնթէին և ընփաթաքափփային ալ ազատութիւն շնորհուի.

Կուղեթա. Կեցիք քիչ մը, տիկին, կեցիք քիչ մը. կեցիք որ շունչս առնեմ։ Ատ ինչ հրամաններ են որ ինձ կու տաք։ Ո՛վ Աստուած, ներողութիւն կ՝անձրևէ, ու գթութիւն կը կարկտէ. գթութեան ծովին մէջ ընկղմեցայ. չեմ գիտեր թէ ինչպէս պիտի ազատիմ բարի գործոց աս սոսկալի ջրհեղեղէն։

Տօնա Լուբրեցիա. Ը՝րածներս թէ բարի ըլլան և թէ չար՝ քեզ չեն նըկատեր, բաւական է որ դուն վարձքդ առնես։

Կուղեթա. Շատ աղէկ, բայց պէտք է գիտնալ որ բարեգործութիւնը չարիք գործելէն դժուար է։ Ո՜հ, ինչ խեղճ Կուպէթա եմ եղեր ես, հիմա որ գթասրտութիւնը ձեռք առիք, ես ինչ պիտի ըլլամ այսուհետև։

Տօնա Լուբրեցիա. Մտիկ ըրէ, Կուպէթա, դուն իմ ամենէն հին և ամենէն աւելի մտերիմ խորհրդակիցս ես..

Կուղեթա. Ը՝յո՛, տասն և հինգ տարի է որ ես ձեր գործակիցը ըլլալու պատիւն ունիմ։

Տօնա Լուբրեցիա. Շիտակը ըսէ, Կուպէթա, դուն ալ չե՞ս տեսներ որ ալ պէտք ենք մեր կենաց ընթացքը փոխել. միթէ դուն ալ չե՞ս ուզեր օրէնքներ առնել. բաւական չէ՞ որ այնչափ անէծք առինք, տակաւին մեղանչել կուզե՞ս։

Կուղեթա. Կը նայիմ որ առաքինի տիկին մը ըլլալ կը յօժարիք։

Տօնա Լուբրեցիա. Միթէ մեր անօրէնութեան, սպանութեան և թունաւորութեան ընդհանուր եղած համբաւը ծանր չե՞ր եւ բեր քեզ, ո՛վ Կուպէթա։

Կուղեթա. Ամենեւին. Սփոլէթի փողոցներէն անցած ատենս՝ բնակիչները իրարու կը մրմնջեն. Ը՝հա՛ աս է Կուպէթան, թոյն-Կուպէթան, սուր-Կուպէթան, կախաղան-Կուպէթան, քանզի իմ անուանս աս պատուոյ երեւելի յորջորջումը կու տան, և թէ որ ձայնով չիսօսին, աչքով կը խօսին. ինչ ինաս ունի, ես սովորած եմ չար համբաւ ունենալու պատարագին ըստ պատուորութիւն ընող պապին զինուորի մը պէս։

Տօնա Լուբրեցիա. Ձե՞ս մտածեր որ հասարակութեան քեզ տուած այն ամենանարգ անունները կրնան քու սիրած անձիդ ատելութիւնը գրգռել։

Ամենևին մեկը չէս սիրեր, Կուպէթա։

Կուդէթա. Կ'ուզէի գիտնալ թէ ո՞վ կը սիրէք դուք, տիկին։

Տօնա Լուբրեցիա. Այս իմ սէրս քեզմէ չեմ պահեր, Կուպէթա. բայց աս սէրս ոչ հայրական, ոչ եղբայրական, ոչ ամուսնական, և ոչ տարփական սէր է։

Կուդէթա. Ամենքդմէ զատ ուրիշ ինչ կայ սիրելու։

Տօնա Լուբրեցիա. Ուրիշ առարկայ մը կը մնայ սիրելու, Կուպէթա։

Կուդէթա. Կը հասկնամ, Աստուծոյ սիրոյն համար ինքզինքնիդ առաքինութեան կուտաք։

Տօնա Լուբրեցիա. Կուպէթա, Կուպէթա, թէ որ այսօր այս Իտալիոյ մէջ, այս աղէտալի և մեղապարտ Իտալիոյ մէջ ազնիւ և յստակ սիրտ մը գտնուի, վսեմ և արու առաքինութիւններով լեցուն սիրտ մը, ո՜հ, եթէ այն վսեմ և մաքուր սրտին մէջ ինծի համար, որ թշուառական, ատելի, նախատելի, զզուելի, մարդոցմէ անիծեալ, երկինքէն դատապարտեալ, ողորմելի կին մ'եմ, եթէ աս անձկութեանս մէջ, ուր հոգիս ցաւագին կը հեծէ, եթէ այն սրտին մէջ կ'ըսեմ, Կուպէթա, մեռնելէս առաջ խանդաղատանաց անկիւն մը, գոյղն ինչ պատուոյ արժանանալու յոյս մը, աղբիւր մը կամ գաղափար մը ունենայի, եթէ օր մը վերջապէս այն սրտին խմենիս վրայ ուրախութեամբ և աղատութեամբ թընդալը զգալու փառաւորութիւնը ունենայի, ո՜հ, կ'իմանամ հիմա, Կուպէթա, թէ ինչու համար անցեալը գնելու, համբաւս լուալու, և իմ վրաս եղած բիծերը մաքրելու, և փառաց, ապաշխարութեան և առաքինութեան փոխելու կը փութամ այն ամէն անօրէնութիւններս և արիւնհեղութիւններս, որոնց համար բոլոր Իտալիա գիս կ'ատէ։

Կուդէթա. Ո՛վ Աստուած, ո՞ր կրօնաւորը միտքերնիդ եկաւ այսօր։

Տօնա Լուբրեցիա. Մի՛ ծիծաղիր բընաւ, շատոնց աս գիտաւորութիւնը ունիմ և քեզ չեմ ըսեր. երբ մարդ մեղքերու մէջ է՝ ուղած ժամանակը չը կրնար կենալ։ Արտիս մէջ բարի և չար հրեշտակները կը կռուին, կարծեմ որ բարին պիտի յաղթէ։

Կուդէթա. Գիտէք, տիկին, որ ալ ձեր ըսած խօսքերը չեմ հասկնար, և քիչ մը ժամանակէ 'ի վեր զարմանալի ընթացք մը կը տեսնեմ ձեր վրայ։ Ամիս մը առաջ իմացուցիք թէ Սփոլէթ պիտի երթաք, բարեմիտ ամուսիննէդ հրաման առիք, ու Ֆէրարէն մեկնելով գաղտնի և գրեթէ առանձին Վենետիկ եկաք դուք Վէսպասիանոսեցւոյ և ես Սպանիացւոյ կեղծ անուն մը կրելով։ Վենետիկի մէջ ինձմէ զատուեցաք ու հրամայեցիք որ ալ ձեզի հետ տեսութիւն չընեմ. անատեն սկսաք պարերը, հանդէսները, տօնախմբութիւնները յաճախել, ու բարեկենդանի պատրուակաւ՝ դիմակաւորեալ դաղտնի ուղած տեղերնիդ երթալ, ու հաղիւ թէ ամէն իրիկուն երկու դրան մէջ տեղը հետս երկու խօսք կ'ընէիք, և հիմա բոլոր աս գործերը մէկ խօսքով կը վերջացընէք։ Ձեր անունը փոխեցիք, դգեստնիդ փոխեցիք, և հիմա սիրտերնիդ կը փոխէք, պատճառը ինչ է չեմ կրնար

հասկընալ. ես այսուհետև ինքզինքէս եղած եմ։

Տօնա Լուքրեցիա, Աշխարհի անոր յիշատակը բռնելով և Ռենարօյին փոխը պահելով, որ պոկուին հայրեր էր։ Աս երիտասարդը տեսար։

Կուդեթա. Ինձ անծանօթ մէկը չէ ան. և գիտեմ որ վենետիկ հասնելնէդ 'ի վեր դիմակաւորեալ անոր ետեւէն կը վազէք։

Տօնա Լուքրեցիա. Տէս ինչպէս դեղեցիկ է։

Կուդեթա. Աւելի գեղեցիկ կ'ըլլար թէ որ աչքերը դոց չըլլային. առանց աչաց դէմք մը՝ առանց զատուհանի պալատի կը նմանի։

Տօնա Լուքրեցիա. Գիտնայիր թէ որչափ կը սիրեմ զան։

Կուդեթա. Տօն Ալֆոնցօ քու ամուսինդ թող մտածէ այդ տեղ։ Սակայն ես ձեզ իմացընեմ որ պարապ տեղը կ'աշխատիք. լսածս՝ աս երիտասարդը Ֆիամմէթա անուամբ գեղեցիկ օրիորդ մը կը սիրէ։

Տօնա Լուքրեցիա. Օրիորդն ալ զան կը սիրէ՞ արդեօք։

Կուդեթա. Այո՛, կը սիրէ կ'ըսեն։

Տօնա Լուքրեցիա. Շատ կը փափաքիմ որ անոր հետ երջանիկ ըլլայ։

Կուդեթա. Զարմանալի բան, ես կը կարծէի որ պիտի նախանձիք անոր մէ։

Տօնա Լուքրեցիա, Ռենարօն դիտելով. Ի՞նչ աղնիւ դէմք։

Կուդեթա. Շատ կը նմանի մէկու մը...։

Տօնա Լուքրեցիա. Չեմ ուզեր գիտնալ թէ որու կ'ուզես նմանցընել, այլ գիս հոս մինակ թող ու գնա։

Կ'ուզեմ դուռս փակել. և Տօնա Լուքրեցիա ցնորք ստանալով որ մը ժամանակ ճենարօյին դիմացը էր մնայ. որ ներս մտնող երեւոյթ դիմակաւորեալ մարդիկը լսեներ։

Տօնա Լուքրեցիա, Օդին դիմակ կրծելով. Այո՛, նոյն ինքն է, ուրեմն վերջապէս արժանի եղայ զինքը տեսնելու. ոչ, այսչափ գեղեցիկ չէի կարծեր որ ըլլայ։ Ով տէր, մի թողուր որ զիս ատէ և նախատէ, գիտեւ որ աշխարհի մէջ ասկէ ուրիշ մէկը չեմ սիրեր։ Դիմակս չեմ համարձակիր երեսէս հանել, բայց այսու ամենայնիւ պէտք եմ արտասուքս սրբել։

Դիմակը երեսէն կը հանէ ու աչքերը կը սրբէ. և ճենարօյին յիշատակը կը համբուրէ, և դիմակաւորեալ երեւոյթ մարդիկը շատ յոյնով կը խօսին։

Առաջին դիմակաւորեալ մարդը. Բաւական է, ալ կրնամ Ֆիէրար դառնալ. անոր անհաւատարմութիւնը ստուգելու համար միայն վենետիկ եկեր էի, տեսածս բաւական է և չեմ կրնար երկար ատեն Ֆիէրարէն բացակայ ըլլալ։ Աս երիտասարդը անոր սիրահարն է. ինչ է անունը գիտես, Թուսթիկէլօ։

Երկրորդ դիմակաւորեալ մարդը. Անունը Ռէնարօ է. բաղդախնդիր քաջ հարիւրապետ մը, որ ոչ հայր ունի և ոչ մայր, և իր ծնունդը չգիտցուիր. հիմա վենետիկի հասարակապետութեան կը ծառայէ։

Առաջին մարդը. Կայէ որ կերպով մը զինքը Ֆիէրար տանես։

Երկրորդ մարդը. Ինքնիրեն հոն պիտի գայ, պարոն. վաղը չէ միւս օրը Ֆիէրար գացող դեսպաններուն ուղեկից պիտի ըլլայ։

Առաջին մարդը. Շատ աղէկ կ'ըլլայ, անոր վրայօք ինձ տուած տեղեկութիւններին շատ ստոյգ է։ Տեսածներս բաւական է, կ'ըսեմ, երլենք երթանք։

Դուրս կ'ելլեն։

Տօնա Լուքրեցիա, յետոյերը մնալով Ամենարոյին առջեւը գրեթէ ծունր դրած. Որչափ երջանիկ է ինքը և որչափ դժբաղդ եմ ես։

Լուսրէցիոյ ճանապարհը կը համբուրէ, որ ընդոստ ի՛նքնին։

Ամենարո, Լուսրէցիային երկրորդ ելեր բանեցնելով. Կին մը զիս համբուրէ։ Ամարիտ կ'ըսեմ, տիկին, եթէ դուն թագուհի ըլլայիր և ես բանաստեղծ մը, ստուգապէս Ալէն Շարթիէ զաղղիացի պատմին դիպուածին պիտի նը. մանեցինք։ Բայց ըսէ ինձ թէ դուն ո՞վ ես, ես լոկ զինուոր մ'եմ։

Տօնա Լուքրեցիա. Թող որ երթամ, պարոն Ամենարո։

Ամենարո. Ոչ, տիկին։

Տօնա Լուքրեցիա. Մէկը կու գայ։

Կը խոյնի և ճանարոյ անոր երեսին իրերաց։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՄԱՓԻՈ. ԺԱՓՈ

Ժէփո, մթոն լողմեն ներս մտնելով. Մաֆիո, աս կինը ո՞վ է. Լուքրեցիա Պօրձիան կ'երևի. վենետիկի մէջ ինչ գործ ունի։

Մաֆիո, ներս մտնելով. Ի՞նչ կ'ըսես։

Ժէփո. Ըլսուած բան մը ըսեմ քեզ։

Կամաց մը Մաֆիոյի ականջին իր մրմնջէ.

Մաֆիո. Ստոյգ է ըսածդ։

Ժէփո. Այո, այնչափ, որչափ որ հիմա աս պալատին մէջ ըլլալուս վըրայ ստոյգ եմ։

Մաֆիո. Ամենարոյին հետ սիրահարական խօսքեր կ'ընէր։

Ժէփո. Ամենարոյին հետ։

Մաֆիո. Պէտք եմ իմ Ամենարո եղբայրս աս վտանգէն ազատել։

Ժէփո. Նկու մեր բարեկամներուն իմացուր։

Դուրս կ'ելլեն։ – Քիչ մը ետեն պէտքարանը դարարէ իր մնայ, դիտն մերի ընդ մերի ընարէն ներսէն իողնեն երտիրտներով լեցուն իօնոցներ ի՛նանցին։ – Ճանարո և Լուսրէցիա դիմաւորելու իր մտնեն։

Տօնա Լուքրեցիա. Այս բակը մութ և տանձին է, կրնամ հոս դիմակս հանել. կ'ուզեմ որ երեսս նայիս, Ամենարո։

Դիմակը երեսեն իր հանէ։

Ամենարո. Շատ գեղեցիկ էք, տիկին։

Տօնա Լուքրեցիա. Այրեսս աղէկ նայէ, Ամենարո, և ըսէ ինձ չեմ սոսկար ինձմէ։

Ամենարո. Բեղմէ՞ սոսկամ, տիկին, և ի՞նչ պատճառաւ. ընդհակառակն, սրբատիս մէջ բան մը կ'ղգամ որ դէպ 'ի քեզ կը քաշէ։

Տօնա Լուքրեցիա. Ուրեմն կը կարծես որ պիտի կարենաս զիս սիրել, Ամենարո։

Ամենարո. Ինչո՞ւ չէ. սակայն, տիկին, ես հաւատարիմ եմ, միշտ մէկ կին մը քեզմէ աւելի պիտի սիրեմ։

Տօնա Լուքրեցիա, ժպտելով. Դիտեմ, սիրելի Ֆիամեթա օրիորդն է այդ։

Ամենարո. Ոչ, ան չէ.

Տօնա Լուքրեցիա. Ո՞վ է ուրեմն։

Ճենարօ. Մայրս։

Տօնա Լուքրեցիա, Մայրդ, ով սիրելի Ճենարօ, մայրդ. այդչափ կը սիրե՞ս մայրդ։

Ճենարօ. Այսու ամենայնիւ զան տեսած չեմ։ Այս նորանշան բան մը պիտի երևի քեզ, այնպէս չէ՞, Ճշմարիտ չեմ գիտեր թէ ինչպէս սիրտս հակամիտեալ է քեզի բացուելու. այնպիսի դաղտնիք մը պիտի ըսեմ քեզ որ տակաւին մէկու մը ըսած չեմ, և ոչ իսկ իմ նիզակակից Մաֆիօ Օրսինի եղբօրս։ Օգտանալի է որ այսպէս առաջին անգամ զքեզ տեսնելով իմ սիրտս բանամ. բայց այնպէս կարծեմ որ դուն անծանօթ մէկը չես։ Այս հաբիւրապետ մ'եմ, բայց իմ ընտանիքս չեմ Ճանչնար։ Ձկնորս մը զիս Հալապրայի մէջ մեծցուցեր է, որն որ իմ հայրս կը կարծէի։ Տասն և վեցը տարեկան եղածիս պէս. աս ձկնորսը իմացուց ինձ որ իմ հայրս չէ։ Քիչ մը ժամանակ ետքը՝ մէկը եկաւ ու առանց ինծի Ճանչցուելու՝ ասպետի պատիւ տուաւ, ու անհերևոյթ եղաւ։ Ասկէ քիչմը ժամանակ ետքն ալ՝ սեաղգեաց մէկը ինձ նամակ մը բերաւ. բայց զան, մայրս ինձ նամակ մը գրեր էր, զոր չէի Ճանչնար. և զորն որ ես քեզի պէս բարի, քաղցր, և գեղեցիկ կին մը կը կարծէի։ Այս նամակը ինձ կ'իմացնէր առանց անուն մը տալու թէ ես ազնուական և մեծ ցեղէ եմ. և թէ մայրս խիստ դժբաղդութեան մէջ կը գտնուի։ Խնդրէ կին։

Տօնա Լուքրեցիա. Շատ բարեսիրտ ես. ով Ճենարօ։

Ճենարօ. Ան օրէն 'ի վեր բաղդախնդիր եղայ. 'ի ծնէ ազնուական ըլլալուս՝ ուզեցի իմ սուրովս երևելի ըլլալ։ Բոլոր Իտալիա դարձայ. բայց ամէն ամսոյ առջի օրը, ուր որ ըլլամ՝ նոյն սեաղգեաց մարդը կու գայ, մօրս կողմէն նամակ մը կը բերէ, պատասխանը կ'առնէ և կը մեկնի. ոչ ան ինծի հետ կը խօսի և ոչ ես անոր հետ, վասն զի խուլ և համր է։

Տօնա Լուքրեցիա. Ուրեմն ընտանեացդ վրայօք բան մը չես գիտեր։

Ճենարօ. Գիտեմ որ մայր մ'ունիմ, որ դժբաղդ է, և որուն կեանքս կու տամ զան տեսնելու համար։

Տօնա Լուքրեցիա. Ընոր նամակները ինչ կ'ընես։

Ճենարօ. Ամենն ալ պահած եմ սրբոտիս վրայ. մինչ պատերազմականքս. մեր կուրծքերը շատ անգամ սուրերու դիմադրաւ կ'ընենք։ Օր մը նամակները ամուր զրահներ են։

Տօնա Լուքրեցիա. Ի՞նչ ազնիւ սիրտ ունիս եղեր։

Ճենարօ. Կ'ուզե՞ս անոր գրութիւնը տեսնել, ահա անոր նամակներէն մէկը։ (Կը հանէ իր կրծքէն թուղթ մը կը հանէ, կը համբուրէ զան և Տօնա Լուքրեցիայէն կու տայ)։ Կարդացէք սա թուղթը։

Տօնա Լուքրեցիա, կարդալով՝ . . . Մի աշխատիր զիս Ճանչնալու, Ճենարօ, մինչև որ ես քեզի ժամանակը ցուցնեմ։ Դժբաղդ վիճակի մէջ եմ՝ անգութ ազգականաց ձեռքը մնացած, որոնք կրնան զքեզ մոցընել, ինչպէս որ քու հայրդ մոցուցին։ Օգտակար, ծնունդեանդ դաղտնիքը միայն ես գիտեմ. եթէ դուն իմանալու ըլլաս, միանգամայն ցաւալի և երևելի դէպք մ'է.

երիտասարդութիւնը յանձնառաստան է. դու ինձ չափ չես ճանչնար զքեզ շրջապատող վտանգները. ո՞վ գիտէ, երիտասարդական աշխոյժովդ պիտի ուզես անոնց դիմադրաւ ըլլալ, և կամ բարեկամացդ հետ խօսելով պիտի յայտնուիս և կեանքդ վտանգի մէջ պիտի դնես։ Ո՛հ, ոչ, զոհ եղիր միայն գիտնալու թէ մայր մը ունիս, որ զքեզ կը սիրէ, և գիշեր ցորեկ քու կենացդ վրայ կը հսկէ։ Ո՛վ սիրասուն Ճէնարո, զաւակս, երկրի վրայ քեզմէ զատ ուրիշ մէկը չեմ սիրեր, երբ քու վրայօքդ կը մտածեմ՝ հոգիս կը հալի"։

Լուրեցիայի ուշը արտասուով լեցուելով. նամակը կ'ընդունի։

Ճէնարո. Ի՞նչպէս խանդաղատանօք կը կարդաս այդ նամակը։ Կարծես թէ կը խօսիս և ոչ թէ կը կարդաս։ – Ո՛հ կուլամ, ի՞նչպէս բարեսիրտ և սիրելի ես, տիկին, որ մօրս գրութեան վրայ կուլաս։ (Նամակը անոր յետոյէն կ'առնու, ներքեւն կը հաբուրէ զան, և իւր կուրծքը կը դնէ)։ Կը տեսնեմ՝ ծննդեանս ժամանակ շատ մեղքեր գործուած պիտի ըլլան։ – Խե՛ղճ մայրս, – կ'իմանամ հիմա թէ ինչ պատճառաւ սէրը և տարփանքը այնչափ հոգս չէ, ըստ որում մը տացս մէջ միայն մէկ մտածմունք ունիմ, որ է մայրս։ Ո՛հ, նախ և առաջ մայրս պիտի ազատեմ, անոր պիտի ծառայեմ, անոր համար վրէժխնդիր պիտի ըլլամ և զան պիտի միխիթարեմ, ո՛հ, ինչ երջանկութիւն անատեն, ու անկէ ետքը սիրոյ վրայ պիտի մտածեմ։ Ինչ որ կ'ընեմ՝ մօրս արժանի ըլլալու համար կ'ընեմ։ Ընելիքիւղ գինուորներ կան, որոնք երբեմն Ս. Մէքայէլի և երբեմն սատանայի համար կը կռուին, բայց ես արդարացի պատճառներ ունիմ, կ'ուզեմ որ օր մը իմ սուրբ և օրինաւոր սուրս մօրս ոտից ներքևը դնեմ կայսեր մը սուրին պէս։ Լուքրեցիա Պօրճիա անօրէն տիկնոջ դրօշակին տակը գինուորութեան բարձր պաշտօն մը առաջարկեցին, բայց չընդունեցի։

Տօնա Լուքրեցիա. Ճէ՛նարո, Ճէ՛նարո, չար մարդոց վրայ դուք ունեցիր. չես գիտեր թէ անոնց սիրտէն ինչ կ'անցնի։

Ճ՛էնարո. Ընդուած մարդոց վրայ չեմ գթար։ – Բայց թողունք աս խօսքերը, տիկին. հիմա որ իմ ո՞վ ըլլալս քեզ իմացուցի, դուն ալ ըսէ ինձ թէ դուն ո՞վ ես։

Տօնա Լուքրեցիա. Կին մը որ ըզքեզ կը սիրէ, Ճ՛էնարո։

Ճ՛էնարո. Բայց քու անունդ։

Տօնա Լուքրեցիա. Ամ բանը մի՛ հարցրներ ինձ։

Ջուրեր իջ պէնուին. Յէ՛ֆիս և Մարիս յայտնուիլ իջ մարդն, Տօնա Լուքրէցիա ղրպոպա իր դիմաց երէսը ի՛ռնդնէ։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՆՈՑՆԵՐԸ.

ՄԱՓԻՍ ՕՐՍԻՆԻ. ԺԷՖՕ ԼԻՎԼԻԷԹՕ. ԱՍՔԱՆԻՕ ՓԷԹԵՐՈՒՔԻ. ՕԼՕՖԷՐՆՕ ՎԻԹԷԼՈՕՕ ՏՕՆ ԱՖՕՍԹՕԼՕ ԿԱՁԷԼԼԱ.

ԻՇԽԱՆՆԵՐ. ՏԻԿԻՆՆԵՐ. ՄԱՆԿԱՎԱՐԻԿՆԵՐ. ձեռքերին ջահեր բռնած։

Մաֆիս, ջահ մը բռնած. Ճ՛էնարո, կ'ուզէս գիտնալ թէ ո՞վ է ադ կինը, որուն հետ սիրահարական խօսքեր կ'ընես։

Տօնա Լուքրեցիա. Ո՛վ արդար Աստուած։

Ճենարո. Ամենքնիդ ալ իմ բարեկամներս էք. բայց ով որ աս կնոջ դիմակին դպչի՝ յանդուգն մարդ մը պիտի սեպեմ զան։ Կնոջ մը դիմակը մարդու մը երեսին պես սուրբ է։

Մաֆիո. Բայց աս բանին համար պէտք է որ կինը օրինաւոր ըլլայ, Ճենարո. մեր միտքը զան նախատեալ չէ, այլ կ'ուզենք մեր անունը անոր ըսել։ (Դէպ 'ի Լուքրեցիա յայլ մը յաջանալով)։ – Տիկին, ես Մաֆիո Օրսինին եմ, Կրավինա դուքսին եղբայրը, զոր ձեր նուիրակները խեղթեցին անոր քնացած ատենը։

Ժէֆո. Ես Ժէֆո Լիվերեթօն եմ, տիկին, Լիվերեթո Վիթելլին եղբօր որդին, զոր դուք Վատիկանի մառաններուն մէջ դաշոյնով սպաննել տուիք։

Ասքանիո. Տիկին, ես Ասքանիո Փէթրուչին եմ, Սիէնայ իշխանին Փանտոլֆո Փէթրուչիին օրէնդրօրորդին, զոր դուք տօնախմբութեան մը մէջ թունաւորեցիք՝ անոր Փիօմպինո ամուր բերդը նենդութեամբ յափշտակելնէդ ետև։

Տօն Ալֆոնցօ. Տիկին, դուք դլխատութեան բեմին վրայ սպաննել տուիք Տօն Ֆրանչէսկո Կաղէլան, ձեր երրորդ ամուսին Տօն Ալֆոնցո տ'Էրակլիին մօրեղբայրը, զոր դեղարդի հարուածով Ս. Պետրոսի սանդուղքին վրայ նոյնպէս սպաննել տուիք։ Ես Տօն Ալֆոնցօ Կաղէլան եմ, զոհերուն մէկուն որդին և միւսին մօրեղբօրորդին։

Տօնա Լուքրեցիա. Ով Տէր Աստուած։

Ճենարո. Ինչի՞ վէ է աս կինը։

Մաֆիո. Հիմա որ մեր անունը տուինք, կ'ուզէք, տիկին, որ ձերն ալ տանք։

Տօնա Լուքրեցիա. Ո՛չ, ո՛չ, պթաց՛էք ինծի, պարոններ, Ճենարոյին առջևը մի՛ ըսէք։

Մաֆիո, Լուքրեցիին դիմակը հանելով. Հանեցէք դիմակնիդ, տիկին, որ տեսնենք թէ կ'ամչնա՞ք մեզմէ։

Տօն Ալֆոնցօ. Ճենարո, աս կինը որուն հետ կը խօսէիր՝ թունաւոր է և շնացող։

Ժէֆո. Ազգապիղծ է և իր երկու եղբարց հետ եղբայրապիղծ, որոնք իւր սիրոյն համար զիրար սպաննեցին։

Տօնա Լուքրեցիա. Շնորհք ըրէք, ով պարոններ։

Ասքանիո. Հայրապիղծ իր հօրը հետ, որ է պապը։

Տօնա Լուքրեցիա. Գթացէք, կ'աղաչեմ։

Օլֆէրնօ. Որդեսպիղծ ալ պիտի ըլլար, եթէ զաւակ ունենար, բայց Աստուած այսպիսի հրէշներուն զաւակ չտար։

Տօնա Լուքրեցիա. Բաւական է ալ։

Մաֆիո. Կ'ուզես անոր անունը դիտնալ, Ճենարո։

Տօնա Լուքրեցիա. Շնորհք ըրէք, պարոններ, կ'աղաչեմ։

Մաֆիո. Ճենարո, կ'ուզես դիտնալ թէ ինչ է անոր անունը։

Տօնա Լուքրեցիա, Ճենարոյին ոտքը խնալով. Մտիկ մ'ըներ ատոնց, ով Ճենարո։

Մաֆիո, յեռոտը երկնցնելով. Անոր անունը Լուքրէցիա Պօրճիա է։

Ճենարօ, ղան հաՒելով. Ո՛Հ։

Ամենքին մեկտեղ. Լուքրէցիա Պօրճիան է։

Լուքրէցիա Ճենարոյին ոտքին տակը նստաղէալ լինելոյ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆէրարայի մեկ հրապարակ մը։ Ալ կողմը՝ Ջանդակներով գոցուած դաստիարակով դաչատ մը, եւ մեկ ցած դուռ մը։ Պատշգամբին տակը Ջինանիշանի ջահան մը։ Ջրան ոսկեցօծեալ դեղնիզ խոշոր գրերով՝ ՊՕՐՃԻԱ գրուած։ Ձախ կողմը՝ փոքր տուն մը։ որ հրապարակին ջրայ դուռ մը ունի։ Դիմացը տուներ եւ ցանգակատուններ կան։

ՑԵՍԱՐԱՆ Ա.։

ՏՕՆԱ ԼՈՒՔՐԷՑԻԱ. ԿՈՒՊԷԹԱ.

Տօնա Լուքրէցիա. Գիշերուան համար ամէն բան պատրաստեալ տուէք, Կուպէթա։

Կուդէթա. Այո՛, տիկին։

Տօնա Լուքրէցիա. Հինգերորդին ալ հոն պիտի գտնուի՛ն։

Կուդէթա. Այո՛, ամենքն ալ։

Տօնա Լուքրէցիա. Խիստ անդթութեամբ նախատեցին զիս, Կուպէթա։

Կուդէթա. Ինչդ որ ես հոն չգըտնուեցայ։

Տօնա Լուքրէցիա. Ամենևին չդթացին ինձ։

Կուդէթա. Այդպէս անուանդ բացարձակ պրոցային։

Տօնա Լուքրէցիա. Իմ անուանս չի ուրին, Կուպէթա, այլ նախատեցին զան։

Կուդէթա. Պարահանդէսի՞ն մէջ։

Տօնա Լուքրէցիա. Այո՛, Ճենարոյին առջև։

Կուդէթա. Վենետիկէն Ֆէրարա դեսպանութեան գալերնուն համար գոռոզացեր են։

Տօնա Լուքրէցիա. Ո՛Հ, անոնք պատճառ եղան որ ան հիմա պիտի ատէ ու նախատէ զիս։ Կուպէթա, ես վըրէժս պիտի լուծեմ անոնցմէ։

Կուդէթա. Իմ ուզածս ալատ է. հիմա խելքերնիդ գլուխնիդ եկաւ ու գթութեամբ բեւեակայուելնիդ ցրուեցիք։ Օրհնեալ ըլլայ Աստուած. ուրախ եմ որ ձեր բնութեան հաւնմամբ կը վարուիք. գոնէ ինքզինքս կը գտնեմ հիմա. լիճը կղզիին հակառակն է, աշտարակը՝ հորին, ջրմուղը՝ կամուրջին, ես ալ պատիւ ունիմ առաքինի մարդու մը հակառակն ըլլալու։

Տօնա Լուքրէցիա. Ճենարօն անոնց հետն է, զգուշացիր որ անոր բան մը չըլլայ։

Կուդէթա. Յիթէ գուք բարի կին մը ըլլաք ու ես բարի մարդ մը՝ այլանդակ բան մը պիտի ըլլայինք։

Տօնա Լուքրէցիա. Զգուշացիր որ Ճենարոյին գլուխը բան մը չգայ։

Կուդէթա. Ընհոգ եղիք։

Տօնա Լուքրէցիա. Կ՚ուզէի անդամ մը ևս տեսնել զան։

Կուդէթա. Փառք Աստուծոյ՝ ամէն օր կը տեսնէք զինքը։ Ձեր պատըշգամբին դիմացը եղած տնակը բնակելատալու համար՝ անոր ծառային սիրտը շահեցաք, և ձեր վանդակամած պատուհաններուն տակէն անպատմելի ուրախութեամբ ամէն օր այն պարոնին ելլելը և մտնելը կը տեսնէք։

Տօնա Լուքրէցիա. Այսինքն անոր հետ խօսիլ կ՚ուզեմ, Կուպէթա։

Կուդէթա. Ասկէ աւելի զիւրին ինչ կայ, ծառանիդ զրկեցէք ու իմացուցէք անոր թէ այսօր զինքը այս ինչ ժամուն պալատը կը սպասէք։

Տօնա Լուքրեցիա. Ադէկ ըսիր, Կուպէթա. բայց արդեօք կու գայ։

Կուդէթա. Ներս մտէք, տիկին, կարծեմ որ նոյն անզգամներուն հետ ասկէ պիտի անցնի հիմա։

Տօնա Լուքրեցիա. Միշտ զքեզ Պէրվէրանա կոմսը կը կարծեն։

Կուդէթա. Բոլորովին Սպանիացի կը կարծեն զիս. անոնց հետ մեծ բարեկամութիւն ունիմ, ու անոնցմէ ըստակ կ'ուզեմ։

Տօնա Լուքրեցիա. Ստակը ինչ պիտի ընես։

Կուդէթա. Շատ ստակը աչք կը հանէ, Սպանիացիին բնութիւնն է մուրացկանի կերպարանք ունենալ և սատանային պոչէն քաշել։

Տօնա Լուքրեցիա, Ինդիրեն. Ո՛վ տէր իմ Աստուած, այնպէս տնօրինէ որ Ճէնարօյիս դժբաղդութիւն մը չդայ։

Կուդէթա. Սատանային պոչը ըսի, միտքս բան մը եկաւ։

Տօնա Լուքրեցիա. Ի՞նչ բան։

Կուդէթա. Սատանային պոչը պէտք է որ իր ողնին վրայ աղէկ քամուած, կցուած, և պտուտակով պնդուած ըլլայ, որ դիմանայ այնչափ անհամար բազմութեան, որոնք միշտ զան կը քաշեն։

Տօնա Լուքրեցիա. Ամեն բանի մէջ կը ծիծաղիս, Կուպէթա։

Կուդէթա. Ան ալ պէտք է։

Տօնա Լուքրեցիա. Ահա կարծեմ որ անոնք են որ կու գան. ըսածներս չմոռնաս։

Պարուհիներն դուռն ելնեն դուրսին մէջ նստին։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԴՈՒՔԷԹԱ առանձին.

Ո՞վ է աս Ճէնարօն, և ինչ պիտի ընէ զան Տօնա Լուքրէցիան։ Տիկնոջ ամեն դաղտնիքը չեմ գիտեր. բայց աս բանս իմ հետաքրքրութիւնս կը դրդէ։ Ճշմարիտը, այս անգամ ինձ չվստահեցաւ, թող չկարծէ որ աս պարագայիս մէջ ես իրեն պիտի ծառայեմ. ինչպէս որ կրնայ՝ այնպէս ընէ. բայց ինչ զարմանալի սիրահարութիւն է աս Լուքրէցիայի համար, երբ ինքը Իսմէրիկո Պօրճիայի և Վանօցցայի աղջիկն է, ու իւր արեան մէջ պալատականի և պապի արիւնը ունի։ Ուրեմն Լուքրէցիա տիկինը պըզատոնական եղեր է. ալ այսուհետև բանի մը վրայ չպիտի զարմանամ, մինչև անգամ դան ըսեն ինձ թէ Ղէնքսանդր Զ. պապը Աստուծոյ հաւատացեր է։ (Մէրյոլոյ ֆողոյին մէջ կը նայի)։ Ահա Վենետիկի բարեկենդանի մեր երիտասարդ խենդերը կուգան։ Ի՛նչ անմտութեամբ այնպիսի չեզոք երկիրե մը մեկնելով Ֆէրարա եկան, այնպէս մահացու կերպով Ֆէրարի դքսուհին նախատելէն ետև։ Ընտնց տեղը ըլլայի, շիտակը ետ պիտի կենայի Վենետիկի դեսպաններուն հետ ուղեկից ըլլալէն։ Բայց իրիտասարդները ասանկ են, կամաւ ինքզինքնին վտանգի մէջ կը դնեն։

Երկրաստար պարոններ Ներս ի մտնին՝ առանց Կոստանդնեան գենիներու. որ պարտքամբին գալի սիրտ ներսան մնան էլի պահուած ղանոնք ի գործ։ Ցաց յայնով և անհանգստութեամբ ի լսոն։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԳՈՒՄԻԹԱ. ԱՆՆԱՐՕ. ԵՍԱՅԻՈ. ԺԷՓՕ. ԱՍՔԱՆԻՈ. ՏՕՆ ԱՓՕՍՓՕԼՕ, ՕԼՕՖԷՐՆՕ։

Սաֆիո, ցաց յայնով. Ի՞նչ որ կ'ուզէք՝ ըսէք, պարոններ, Լուքրէցիա Պօրճիա տիկնոջ սիրտը վիրաւորելնուս համար պէտք ենք ֆէրար երթալէն ետ կենալ։

Տօն Ափօս. Ի՞նչ կրնայինք ընել. ծերակոյտն է զմեզ հոն ղրկողը. հնա՞ր է Վենետիկի դերապայծառ ծերակուտին հրամանները չկատարել։ Ընդամ մը որ զմեզ որոշեցին, պէտք ենք երթալ։ Այսու ամենայնիւ, ես ալ քեզի հետ համաձայն եմ, Սաֆիո, թէ Լուքրէցիա Պօրճիա իրօք սոսկալի թշնամի մ'է. քանզի աս երկրին իշխանուհին է ան։

Ժէփօ. Ի՞նչ կրնայ ընել մեզ, Ափօսթօլօ. մենք Վենետիկի հասարակապետութեան ծառայութեան տակը և անոր դեսպաններուն ուղեկիցները չենք։ Եթէ գլուխնուս մէկ մազին դպչի, հասարակապետութեան դէմ պատերազմի նշան տալ է, և ֆէրար այնչափ գիւրութեամբ Վենետիկի չը դպչիր։

Ճ՞էն. առանց խօսակցութեան խառնուելու՝ Բարդոնի մէջ անկիւնը չոքած կը մտածէր. Ո՛հ, մայր իմ, մայր իմ, ո՞վ կրնայ ըսել ինձ թէ ուր է իմ խեղճ մայրս։

Սաֆիո. Առանց գլխուդ մէկ մազին դպչելու, Ժէփօ, կրնան զքեզ գերեզմանը իջեցնել։ Պօրճիաները իրենց գործը թոյներով կը կատարեն առանց աղմկի և ձայնի, ու կացինէն և դաշոյնէն աւելի յաջողութեամբ։ Միտքդ բեր անդամ մը թէ ինչպէս Ալեքսանդր Օ. Օիլիմի թագաւորը աշխարհէս անհետացաւ։

Օլօֆ. Ո՞րչափ մարդիկ նոյն կերպով անհետացան։

Սաֆիո. Այո՛, Պօրճիաները այնպիսի թոյներ ունին, որոնցմով ըստ իրենց հաճոյից, օրուան մը, ամբուան մը և կամ տարուան մէջ կը սպաննեն իրենց ուզածը։ Այնպիսի սոսկալի թոյներ են, որոնք գինին կ'աղնուացնեն, և խմելու ժամանակ աւելի զուարճութիւն կու տան։ Կարծես թէ արբած ես, բայց կը մեռնիս. և կամ՝ յանկարծ մարդ մը ծիւրութեան մէջ կ'ինկնայ, իւր մորթը կը խորշոմի, աչքերը կը խոռոչին, մազերը կը ճերմկնան, ակռաները ապակիի պէս կը փշրուին. քալելու կարողութիւնը կը կորսնցնէ, կ'սկսի սողալ, և շնչառութեան տեղ կը խորդայ. ո՛չ կը ծիծաղի և ո՛չ կը ննջէ. արևուն տաքութեան տակն խակ ցուրտէն կը սարսռայ. երիտասարդը անմիջապէս ծերի կերպարանք կ'առնու. այսպէս քիչ մը ժամանակ հոգեվարքի մէջ տառապելով վերջապէս կը մեռնի։ Ընտանեն կը յիշեն որ տիս մը կամ տարի մը առաջ Պօրճիայի մը տունը բաժակ մը Կիպրոսի գինի խմած է։ — Այհա՛, պարոններ, տեսէ՛ք Մոնթէֆելթրոն, որուն գլուխը նոյն դժբաղդութիւնը եկած է։ Տեսէ՛ք, ահա՛ ասկէ կ'անցնի։

ԱԶԳ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա՛ մինչև բարձրանին նեղքին լուզքն սպիտակ մաշերով։ Նիհար գլխով։ դողդղալով։ խաղալով։ գաղտնի մը վրայ չեղեալ։ և վերջիններով ընչաղաղ մարդ մը ի՛նձնիր։

Ասք։ Խեղճ Մանդիֆելիթրը։

Տօն Ալիսա։ Քանի՞ տարեկան է աս պարոնը։

Մաֆիս։ Քսան և ինը տարեկան։

Օլս։ Ընցեալ տարի ինչպէս առոյգ և կարմրեղ մարդ մ'էր։

Մաֆիս։ Ասկէ երեք ամիս առաջ՝ Պէրլիէրի այգիին մէջ պապին հետ ճաշ մը ըրաւ։

Ասք։ Աս ինչ սոսկալի բան է։

Մաֆիս։ Պորճիայի ճաշերուն վրայօք զարմանալի բաներ կը պատմեն։

Ասք։ Թղթերով համամաալ զեղխ խնջոյքներ կ'ընեն։

Մաֆիս։ Տեսէք, պարոններ, ինչպէս աս հրապարակը անմարդի է, ժողովուրդը չհամարձակիր դքսական պալատին մօտենալ, կը վախնայ որ անոր մէջ դիշեր ցորեկ պատրաստուած թոյները պատերէն դուրս չշնչեն։

Ասք։ Պարոններ, դեսպանները երէկ դուքսին ներկայացան։ մեր գործը գրեթէ լմնցաւ։ Դեսպանութեան ուղեկիցները յիսուն հոգիէ կը բաղկանան, մեր աներևոյթ ըլլալը աս թըւոյն մէջ յայտնի պիտի չըլլայ, և կարծեմ որ մեծ խոհեմութիւն պիտի ընենք եթէ Ֆէրարէն մեկնինք։

Մաֆիս։ Այո՛, այսօր անշուշտ պէտք ենք մեկնիլ։

Ժէֆս։ Պարոններ, կրնանք վաղը մեկնիլ։ Ա՛ղիշեր Նէկրոնի իշխանուհւոյն տունը ընթրիքի հրաւիրուած եմ, որուն չափազանց սէր ունիմ, և չեմ ուզեր Ֆէրարի ամենաղեղեցիկ կնոջ առջևէն փախչիլ։

Օլս։ Ա՛ս իրիկուն Նէկրոնի իշխանուհւոյն տունը ճաշի հրաւիրուած ես։

Ժէֆս։ Այո՛։

Օլս։ Ե՛ս ալ։

Ասք։ Ե՛ս ալ։

Տօն Ալիսա։ Ե՛ս ալ։

Մաֆիս։ Ե՛ս ալ։

Կուդ։ Փրոնին Եվելէն դո՞ւս Եվելիէլ։ Ե՛ս ալ, պարոններ։

Ժէֆս։ Ահա՛ պարոն Պէրլիէրանան ալ, ուրեմն ամենքնիս մէկտեղ կ'երթանք, ուրախ իրիկուն մը պիտի անցընենք հոն, բարի եկար, պարոն Պէրլիէրանա։

Կուդ։ Ապրիս, պարոն Ժէֆս։

Մաֆիս, դէպ յայնոմ Ժէֆսին։ Հիմա դարձեալ պիտի ըսես որ ես վախկոտ եմ, Ժէֆս։ բայց եթէ ինձ կը հաւատաս, եկու աս ճաշին չերթանք։ Նէկրոնի պալատը դքսական պալատին պատկից է, և ես աս պարոն Պէրլիէրանայի բարեկամական կիրպարանքին չեմ հաւատար։

Ժէֆս, դէպ յայնոմ։ Խո՞ւ ես, Մաֆիս։ Նէկրոնին սքանչելի կին մ'է, Հշմարիտ սիրահարած եմ անոր, և Պէրլիէրանան պատուական մարդ մ'է, ես զան և անոր ընտանիքը կը ճանչնամ։ Հայրս անոր հօրը հետ 148.ին Կրընատի պաշարման մէջ էր։

Մաֆիս։ Ընոր հայրը քու հօրդ հետ մէկտեղ ըլլալէն ինչ կը հետևի։

Ժէֆս։ Թէ որ չես ուզեր, մի գար, Մաֆիս։

Մաֆիս։ Թէ որ դուն երթաս՝ ես ալ կուգամ, Ժէֆս։

Ժէֆօ. Ուրեմն կեցցէ՛ս։ — Բայց դուն, Ճէնարօ, դուն ալ աս գիշեր մեզի հետ պիտի չգա՞ս։

Ճսր. Նէկրօնին գքեզ ալ չհրաւիրե՞ց։

Ճէն. Ո՛չ. Իշխանուհին անշուշտ գիս անպատիւ մէկը կարծած է։

Մաֆիօ, Ժպտելով. Ուրեմն, եղբայր, դուն ալ սիրահարութեան մը ժամադիր եղած ես, ու հոն կ'ուզես երթալ։

Ժէֆօ. Ընէ՛կ ըսիր, պատմէ՛ մեզի նայինք, Ճէնարօ, թէ ինչ ըսաւ քեզի անցեալ իրիկուն Լուքրէցիա տիկինը։ Կ'երևի թէ քեզի համար կը խևնայ. պարահանդէսին աղատութեան պատրուակաւը քեզի հետ երկարօրէն խօսեցաւ։ Կանայք ուրիշ բանի համար չեն ծպտիր, այլ աւելի համարձակ իրենց սիրտը մերկացնելու համար։ Ոռակ մը եղած է թէ՝ Նրես դիմակաւորեալ՝ սիրտ հոլանի։

Քանի մը վարէնք Դէր Լուքրէցիա պապգամբին Վրայ է. որոն վանդիները ձեռ մը բարձ մոյ ի՛նչ։

Մաֆիօ. Ճէնարօ, չէ՞ որ անոր սրատչգամբին ճիշտ գիմացի տունը եկար բնակելու։

Տօն Ճփօս. Շատ վտանգաւոր բան է աս, սիրելիս, ըստ որում կ'ըսեն թէ Ֆէրարի դուքսը խիստ կը նախանձի իր կնոջը համար։

Օլօ. Ըսէ՛ մեզի, Ճէնարօ, Լուքրէցիա Պօրճիային հետ ինչ ըրիր։

Ճէն. Պարոններ, եթէ աս սոսկալի կնոջ վրայ տակաւին խօսք մը ընէք, պիտի պարտաւորիմ սուրով խօսիլ։

Տօնա Լուք. պապգամբին Վրայ ինչ՞ իրեն. Ճփսո՞ս։

Մաֆիօ. Կատակ է ըրածնիս, Ճէնարօ։ Բայց կարծեմ աս տիկնոջ վրայօք կրնանք քեզի հետ խօսիլ, ըստ որում անոր նշանները վրադ կը կրես։

Ճէն. Ի՞նչ ըսել կ'ուզես։

Մաֆիօ, անոր Վրայի գօտին ցուցնելով. Աս գօտին ո՞վ տուաւ քեզի։

Ժէֆօ. Ատուգիւ Լուքրէցիա Պօրճիայի գոյներն են ատոնք։

Ճէն. Ֆիամմէթան զրկեց զան ինձ։

Մաֆիօ. Դուն այնպէս կը կարծես. քանզի Լուքրէցիա քեզ այսպէս ըսել տուաւ։ Բայց աս գօտին Լուքրէցիայի ձեռաց գործն է։

Ճէն. Ատոյգ գիտե՞ս, Մաֆիօ, և ո՞վ ըսաւ քեզի։

Մաֆիօ. Քու ծառադ, որ Լուքրէցիա իրեն տուեր և այնպէս ըսել տուեր է քեզ։

Ճէն. Ընդիծեա՛լ ըլլայ այդ կինը։

Գօտին ի՞նչ գործ ունի՞ իր Վրայէն։ ի՞նչ պարտաւորեաց զան։ գործը գոյ ի՞նչ ի՞նչ։

Տօնա Լուք. ինչ՞ իրեն. Ճփսո՞ս։

Վանդիոն ի՞նչ գործ ունի՞ ի՞նչ։

Մա. Ըյտու ամենայնիւ Լուքրէցիա գեղեցիկ կին մ'է։

Ժէֆօ. Ըյո՛, բայց իւր գեղեցկութեան վրայ աղէտալի բան մը տպաւորուած է։

Մա. Սատանայի պատկերով ոսկի տուգադ մ'է։

Ճէնարօ. Ո՛չ, անիծեա՛լ ըլլայ այդ Լուքրէցիա Պօրճիան, որուն համար կ'ըսէք թէ գիս կը սիրէ. թող այնպէս ըլլայ, թող աս ալ իւր պատիժը

ըլլայ։ Ճշմարիտ կ'ըսեմ որ ես կը զզուիմ անորմէ. բայց զմեզ սիրող կնոջ մը առջև կրնա՞նք անտարբեր մնալ, Մաֆիո եղբայր, պէտք ենք կամ սիրել և կամ ատել զան. բայց աս կինը ինչպէս կը սիրուի։ Երբեմն աս տեսակ կիները ուրչափ մեր ետևէն կ'իյնան, այնչափ մեզ ատելի կ'ըլլան։ Ահա աս կինն ալ ետևէս ինկեր, զիս պատեր պաշարեր է. չեմ գիտեր Լուքրէցիա Պօրճիայի մը սիրոյն ինչպէս արժանացեր եմ արդեօք։ Աս բանս միթէ ինձ ամօթ և թշուառութիւն մը չէ՞։ Ընկիսի նախատանքից կերպով անոր անունը ինձ տուած գիշերնէդ 'ի վեր, չէք կրնար երևակայել թէ ինչ ասիճան աս չարագործ կնոջ անունը ինձ ատելի է։ Մինչև հիմա, խիստ հեռուէն Լուքրէցիա Պօրճիայի անունը լսելով, բոլոր Իտալիոյ վրայ ծանրացած սոսկալի ոգի մը, և բոլոր աշխարհի ճիւաղը կ'երևակայէի զան. բայց հիմա աս ճիւաղը իմ ճիւաղս եղաւ, որ ինձ մտոնալով, կ'ուզէ ինծի հետ ապրիլ։ Աս ինչ սոսկալի բան է, Մաֆիո. աս կինը պարոն Կրավինա քու եղբայրդ սպաննեց, ո՜հ, ես քու տեղդ անոր համար աս կնոջմէն վրէժը պիտի առնում։ — Ահա անոր նողկալի պալատը, ահա աս է Լուքրէցիա Պօրճիայի զեղխութեան, մատնութեան, սպանութեան, շնութեան, պղծութեան, և ամէն տեսակ մեղայ պալատը։ Ո՜հ, քանի որ չեմ կրնար այն կնոջ ճակատին վրայ նախատանաց նշանը դնել, զոնէ կ'ուզեմ անոր պալատին ճակատին վրայ դրոշմել։

Պապուշմէն տակը եղած տուն նստարանին վրայ ելեւէջ և իր դաղտնիքը պարին վրայ տանդուած ՊՕՐՃԻԱ անասուն առջևն գիրը ծերբիելով կը հանէ, որուն գիրն ՕՐՃԻԱ (1) կը մնայ։

Ա. Խենդեցե՞ք է, ինչ կ'ընէ հոն։

Ժեփո. Ճէնարո, Լուքրէցիա տիկնոջ անունէն պակսեցուցած մէկ գիրդ քու ուսերէդ զլուխդ պիտի պակսեցնէ։

Կուդ. Պարոն Ճէնարո, աս այնպիսի երկդիմաբան կատակ մը եղաւ, որ վաղը քաղաքին ընակիչներէն մեծ մասը հարցափորձի տակ պիտի մտնէ։

Ճէնարո. Թէ որ յանցաւորը փընտռելու ըլլան, ես պիտի ներկայանամ։

Կուդ. Ինդիրեմ. Շատ ազէկ ըրաւ, աս բանս Լուքրէցիա տիկինը պիտի շփոթէ։

Քանի մը ջորիներ Դ Էր հրապարակին մէջ սնապգեծոյ երիտասարդներ իր պարանոցներուն և զգեստներուն եղածներուն իր գիրքերն։

Ա. Պարոններ, տեսէ՛ք աս չարագէմ անձինքը ինչպէս հետաքրքրութեամբ մեզ կը նային. կարծեմ ազէկ կ'ընենք եթէ իրարմէ բաժնուինք։ — Եղբայր Ճէնարո, խենդութիւնը մէկդի ձգէ։

Ճէնարո. Ընկերոջ եղիր, Մաֆիո, ձեռքդ տուր. մնա՛ք բարեաւ ամենքնիդ ալ, աս գիշեր ազէկ ուրախութիւն մը ընենք։

Իր տունը իր մտնէ, ու դեռներն ալ իր ցրուին։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԵՐԿՈՒ սենեակաց ՄԱՐԴԻԿԸ։

Առաջին մարդը. Ի՞նչ կ'ընես հոդ, Բուսթիչէլօ, և զո՞վ կը փնտռես։

(1). Այսինքն տուն անառակութեանց և շուայտութեանց։

Երկրորդ մարդը. Ա՛ս տունը մտնող անձը կ'ուզեմ. դուն որո՞ւ կը նայիս, Աստծոյ՞ն։

Ա. մարդը. Ես՝ ալ նոյն մարդը կ'ուզեմ։

Բ. մարդը. Զարմանալի՛ բան. ի՞նչ պիտի ընես զինքը։

Ա. մարդը. Դքսուհւոյն քովը տանիլ կ'ուզեմ. դու ի՞նչ պիտի ընես զան։

Բ. մարդը. Ես՝ ալ դուքսին քովը պիտի տանիմ։

Ա. մարդը. Զարմանալի՛ բան։

Բ. մարդը. Ի՞նչ պիտի ընէ դքսուհւոյն քովը։

Ա. մարդը. Անշուշտ սիրոյ համար. դուքսին քովը ի՞նչ պիտի ընէ։

Բ. մարդը. Հաւանականաբար կախուելու համար։

Ա. մարդը. Ի՞նչպէս ընենք. մի և նոյն ժամանակը չկրնար թէ դուքսին և թէ դքսուհւոյն քովը երթալ, և ոչ իսկ սիրով երջանիկ ըլլալ ու կախուիլ։

Բ. մարդը. Հա՛ տուղաղ մը, նեռտենք և նայինք թէ երկուքնուս որո՞ւ պիտի իյնայ աս մարդը։

Ա. մարդը. Կը հաւանիմ ատոր։

Բ. մարդը. Նթէ կորսնցընեմ, պիտի ըսեմ դուքսին թէ փախչեր է. ինձ համար ամենը մէկ է։

Տ-գոդը օդը ի՛ նէոէ։

Ա. մարդը. Գիր է։

Բ. մարդը. Գլուխը նայիլ. Ո՛չ, պատկերն է։

Ա. մարդը. Ուրեմն մարդը պիտի կախուի. ա՛ռ տա՛ր զան, Ամաս բարև։

Բ. մարդը. Նրթաս բարև։

Աջոյին մարդը մինչեւ դէռ՝ երիտասարդը պարզուն գոմէն դուռը ելած դռոտը ի՛ ներսն, ներս ի՛ մտնէ. և տէր մը եկաւ՝ ետ ալիւռները հեռաց դռոտ դուռս ի՛ելեալ և ի՛երկայ ճանապարհին դան դռոտը ի՛ ներսն։ Վարագոյրը ի՛ջնայ։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԱՏՈՒՐ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ֆիրարի գիւղական դաշտային մեկ սրահը ոսկեզօծ նկարներոյ եւ գեղեցիկ կարասիներոյ զարդարուած՝ հնգետասանեորդ դարուն իտալիոյ ձեւին համեմատ։ - Դուքսին Թիկնաթոռը Էսթի ընտանեաց ցինուց նշաններոյն բանուած կարմիր թաւիշէ էր. անոր քովը սեղան մը կայ կարմիր թաւիշոյ ծածկուած։ Ներքին կողմը՝ մեծ դուռ մը կայ. աջ կողմը փոքր դուռ մը. ձախ կողմը գացանի ուրիշ դուռ մը, որուն ետին ոչորածոյ սանդուղ մը կայ ցանգակաղաս երկայն եւ նեղ դատուհանոյ մը շուսաւորուած։

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՏՕՆ ԱԼՖՕՆՍ Տ' ԷՍԹ՝ միաձև շքեղ զգեստներ հագած, ԲՈՒՍԹԻՋԷԼՕ, նոյնպէս միաձև բայց աւելի պարզ հագուած։

Բուսթիշէլօ. Տէ՛ր դուքս, ձեր առաջին հրամանները կատարեցի, ուրիշ ի՞նչ կը հրամայէք։

Տօն Ալֆոնս. Սա՛ բանալին առ, ը՛նա գաղտնի սրահը, քսան և չորրորդ կեղծ դրան քովը ոսկեզօծ արձանին բերանին մէջ պահուած փոքրիկ ծակ մը պիտի տեսնես. բանալին ծակին մէջ խօթէ՛, դուռ մը պիտի բացուի. հոն գաղտնի պահանոց մը կայ, անոր մէջ պիտի տեսնես ապակեայ տիպէ՛ի մը վրայ երկու սրուակներ՝ մէկ ոսկեղէն և մէկ արծաթեղէն երկու դրակոնտիկոնեայ բաժակներով։ Արծաթեղէն սրուակին մէջ պարզ ջուր կայ և ոսկեղէն սրուակին մէջինը պատրաստուած գինի է. ան ափսեայն առանց բան մը

տեղէն շարժելու կը բերես աս սենեկին քովի խցիկին մէջ կը դնես. իմացար, Բուսթիչէլօ, երբէք Պօրճիաներուն երեւելի թոյնին վրայօք ահուդողով խօսելէնին լսած չես, որ Ռաբարի մարմարիոնի աւազին պէս փայլուն և սպիտակ աւազ մ'է, զոր զինիին մէջ խառնելով՝ Բօմբանթէնի զինին Սիրակուզայի զինիի կը փոխուի. զգուշացիր՝ չըլլայ որ ոսկեղէն սրուակին դպչիս։

Բուսթ. Ուրիշ ինչ կը հրամայէք, տէր իմ։

Տօն Ալֆոնս. Ամենէն ընտիր սուրդ պիտի առնուս և նոյն խցիկին մէջ դըրան եռևը պատրաստ պիտի կենաս, որպէս զի հոս եղածները լսես, և աս ոսկեղէն զանգակին ձայնը առնելուդ պէս՝ ներս մտնես, (ռեղանին վրայի զանգակը կը յո-ցընէ)։ — Եթէ միայն "Բուսթիչէլօ" կանչեմ, ափսէն ներս պիտի բերես, եթէ զանգակը հնչեցընեմ, սուրով ներս պիտի մտնես։

Բուսթ. Բաւական է, տէր իմ։

Տօն Ալֆոնս. Պէտք է որ սուրդ մերկ ձեռքդ պատրաստ բռնես, որպէս զի զան դուրս հանելու համար ատենդ չկորսնցընես։

Բուսթ. Շատ աղէկ։

Տօն Ալֆոնս. Բուսթիչէլօ, երկու սուր առ, կարելի է որ մէկը կոտրի. դնա՛ հիմա։

Բուսթիչէլօ դուրս դուռին դուրս կ'ելնէ.

Լուսիրակ մը, ներսէն դուռէն ներս մտնելով. Մեր տիկին դքսուհին կ'ուզէ խօսիլ Ձեր վսեմութեան հետ։

Տօն Ալֆոնս. Թո՛ղ ներս գայ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏՕՆ ԱԼՖՕՆՍ. ՏՕՆԱ ԼՈՒՍԻՆԻՑԻԱ

Տօնա Լուսի. Բարի՞-ՐԻՔՈՄԲ ՆԵՐՍ ՄԸՆԵԼՈՎ. Տէր իմ, տէր իմ, այս ինչ անարժան, ինչ անօրէն, և ինչ անտանելի բան է. պէտք է զիտնաք, Տօն Ալֆոնս, որ հպատակներնէդ մէկը պալատնուդ ճակատի իմ ազգատոհմական զինանշանիս տակը քանդակուած անունս գլխատեր է, աս բանս յորեկը հրապարակաւ 'ի գործ դրուեր է, և սա է ընողը. յայտնի չէ. այսու ամենայնիւ խիստ ծանր և խիստ քրէական պարագայ մի է աս. անունս այս օրինակ նշանակութեան ա՞ոիթ մը ընեն, ու Ֆէրարի ժողովուրդներդ, որ Իտալիոյ ամենէն անօրէն ժողովուրդն է, տէր իմ, իմ ազգատոհմական պատուանշանիս առջևը կանգնած՝ խայտառակութեամբ հեռնէ՞ զիս։ Կը կարծէք, Տօն Ալֆոնս, որ աս բանիս պիտի համբերեմ երբէք. աս փոքր բան չէ. աւելի՞ աղէկ էր ինձ դաշոյնի մէկ հարուածով մեռնիլ, քան այսպէս խայտառակութեան և նշանակութեան դառնացեալ թունովը խառնուած սրտի խոցուածով։ Այս ինչ զարմանալի բան է, պարոն, որ Ֆէրարի մէջ այսպէս տարօրինակ կերպով հետս վարուին, աս բանս համբերութիւնս կը հատցընէ, և կը նայիմ որ հոգերնիդ չէ, և ձեզ հաճելի է՝ երբ կը տեսնէք որ ձեր կնոջ համբաւը նախատանաց և ըսպարտութեան տակը կը ճնշուի։ Այսոր վրէժը պէտք է որ լուծեմ, կ'իմանաք տէր իմ, պատրաստ եղիք ըստ իրաւանց

պատիժը տալու։ Ես ծանր պարագայիս մէջ պէտք էք ձեր կնոջ պատիւը պաշտպանել. այո՛, այո՛, տէր իմ, ո՛վ որ տմուսին ունի, պէտք է զան պաշտպանէ, և ո՛վ որ իր ձեռքը կուտայ՝ իր թեւն ալ պէտք է տայ։ Ես ալ ձեր թեւին վրայ կը վստահիմ. ամեն օր նոր անիրաւութիւններ կ'ըլլան, և երբէք չեմ տեսած որ ինձ համար ցաւիք։ Ընոնց իմ վրաս նեսած տիղմէն ձեր վրայ ալ չի՞ցայտեր արդեօք, Տօն Ալֆոնս. այս ինչ անասբերութիւն է, բարկացիք քիչ մը, որ տեսնեմ կենացս մէջ թէ անդամ մը ինձ համար նեղացաք։ Երբեմն կ'ըսէք թէ զիս կը սիրէք, սիրեցէ՛ք ուրեմն իմ պատիւս, նախանձոտ էք ինձ համար, նոյնը եղիք իմ համբաւոյս համար. ձեր ժառանգական կալուածները ես այնչափ կրկնապատկեցի, և իմ ամուսնութեանս հետ ո՛չ միայն անբաւ հարստութիւններ, և Ս. Հօր օրհնութիւնը բերի, այլ և ձեր զօրութիւնը տարածեցի Սիկնա, Բիմինի, Զէսենա, Պիսլէթ, և Փիսմպինս, ու ասոնցմէ զատ անթիւ քաղաքներ և գրքասութիւններ ձեր իշխանութեան վրայ աւելցընելով, զձեզ Իտալիոյ ամենէն զօրաւոր իշխանը ըրի, ու հիմա իրաւունք է, պարոն, որ ներէք ձեր ժողովուրդին որ զիս ծաղրէ, խայտառակէ, պատուոյս դպչի. կրնա՞ք համբերել տեսնելով որ ձեր Ֆէրարի ժողովուրդը զիս ձիագարմանի կինէ մը աւելի ստորին և աւելի անպատիւ ցուցնէ մատնանիշ բոլոր Եւրոպիոյ. իրաւունք է, կ'ըսեմ, որ ձեր հպատակները ասասիճան թշնամութիւն ունենան վրաս։ — Կը ծանուցանեմ ձեզի, պարոն, այսօրուան այս յանցանքը պէտք է որ քննուի և սաստիկ պատժուի, եթէ ոչ՝ Պապին կը գրեմ, և կամ Վալանթինուային կ'իմացնեմ որ տասն և հինգ հազար պատերազմական զօրքով Ֆիօրլիին մէջ կը գտնուի. ուստի մտածեցէք հիմա թէ ոտք ելլել պէ՞տք էք թէ ոչ։

Տօն Ալֆոնս. Տիկին, ձեզ եղած նախատինքը իմացայ։

Տօնա Լուք. Ի՛նչպէս, պարոն, իմացաք եղած նախատինքը, և յանցաւորը տակաւին չգտնուեցաւ։

Տօն Ալֆոնս. Յանցաւորը գտնուած է, տիկին։

Տօնա Լուք. Օրհնեա՛լ է Աստուած. թէ որ գտնուեցաւ, ինչո՞ւ բռնել չտուիք զան։

Տօն Ալ. Բռնուած է, տիկին։

Տօնա Լուք. Ուրեմն ինչո՞ւ մինչև հիմա պատիժը չտուիք։

Տօն Ալ. Հիմա պիտի պատժուի. բայց ուզեցի որ առաջ ձեր միտքը իմանամ։

Տօնա Լուք. Շատ աղէկ ըրիք, տէր իմ. ո՞ւր է այդ անձը։

Տօն Ալ. Հոս է։

Տօնա Լուք. Ի՛նչ, հոս է։ — Զարդարծներուն օրինակ մը տալ պէտք է, կը ըսէ՞ք, պարոն. ես քրէական յանցանք մ'է, և այսպիսի յանցաւորները գլխատութեամբ կը պատժուին։ Ո՞ւր է տեսնեմ այդ մարդը։

Տօն Ալ. Շատ դիւրին է. (Խանձրով). — Պօթիսթա։

ԵՕՍԻՐԱԼ ԷՄՈՆԷ

Տօնա Լուք. Յանցաւորը գալէն ա-

ռաջ ուրիշ խօսք մ՚ալ ունիմ, պարոն։ Այդ յանցաւորը ո՞վ որ կ՚ուզէ ըլլայ՝ եթէ քաղաքացի և եթէ պալատական, Տօն Ալֆոնս, խօսք տուէք ինձ ձեր դքսական պսակին վրայ որ այն մարդը պիտի չթողուք որ ասկէ կենդանի դուրս ելլէ։

Տօն Ա. Կը խոստանամ, այո՛, կը խոստանամ, տիկին, լսեցէք։

Տօնա Լ. Հա՛ սաղէկ, թող նեռս բերեն հիմա, որ ես ինքնին ասոր հարցուփորձ ընեմ։ Ո՛վ Աստուած, աս Ֆէրարի մարդոց ինչ ըրեր եմ արդեօք, որ այսպէս իմ եռեւէս ինկեր են։

Տօն Ա. Նո՜իրակին. Բանտարկեալը ներս մտցուր։

Ներքին դուռը կը բացուի, ու Ճէնարօ, իր զինքերը հանած՝ երկու զինակիրներու մէջ ներս կը մտնէ։ Նոյն միջոցին՝ Բուսթիչելօն ալ սանդուղքէն վար կ՚ելլէ գաղտնի դրան եռին ձախ կողմի փոքր սենեակը երթալու համար. անկէ ափսէ մը կ՚ինկացնէ՝ վրան մէկ ոսկեղէն և մէկ արծաթեղէն սրուակ և երկու բաժակով։ Ափսէն պատուհանին մէջ կը դնէ. սուրը կը քաշէ և դրան եռին կը կենայ։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՆՈՑՆԵՐԸ. ՃԷՆԱՐՕ.

Տօնա Լ. ինդնիրեն. Ճէնարօն է։

Տօն Ա. փիլոնոլ մօրենաբով, ցած յայնով և ծպպելով. Աս մարդը կը Ճանչնամ։

Տօնա Լ. ինդնիրեն. Այո՛, Ճէնարօն է։ — Ո՛վ Աստուած, այս ինչ դժբաղդութիւն է։

Ճէնարօ. Տէր իմ դուքս, ես լոկ հարիւրապետ մ՚եմ, և արժան եղած պատուով ձեզի հետ կը խօսիմ։ Ձեր վսեմութիւնը աս առտու զիս տանս մէջ բռնել տուաւ, ի՞նչ կ՚ուզէ ինձմէ։

Տօն Ա. Պարոն հարիւրապետ, այս առտու քու բնակած տանդ դիմացը քրէական յանցանք մը գործուած է. մեր դքսական պալատին Ճակատը եղած մեր ամենասիրելի տիկին Տօնա Լուքրէցիա ՊօրՃիայի անունը յանդգնութեամբ նախատեր են, ու մենք յանցաւորը կը փնտռենք։

Տօնա Լ. Սխալմունք մը պիտի ըլլայ, պարոն Ալֆոնս. աս երիտասարդը յանցաւորը չէ։

Տօն Ա. Ո՞ւրկից գիտէք։

Տօնա Լ. Ասոյգ գիտեմ. աս երիտասարդը Վենեսիկցի է և ոչ Ֆէրարցի. ուստի.....

Տօն Ա. Ի՞նչ ապացոյց ունիք։

Տօնա Լ. Աս բանս աս առտու տեղի ունեցաւ, և ես գիտեմ որ աս առտու պարոնը Ֆիամմէթա անունով տիկնոջ մը քով էր։

Ճէնարօ. Ո՛չ, տիկին։

Տօն Ա. Կը տեսնէ՞ք, սխալ իմացուցեր են ձեզ, տիկին. Թողուցէք՝ ես հարցուփորձ ընեմ. հարիւրապետ Ճէնարօ, այն յանցանքը գործողը դուն չե՞ս։

Տօնա Լ. Շփոթեալ. Ո՛հ, աս ինչ տաք է հոս, բայէ՛ք պատուհանը, որ քիչ մը զով առնենք։ (Պատուհանի մը խոռը կը մօտենայ, և Ճէնարօյին խովին անցնելու տեղը շտապով անոր կ՚ըսէ)։ — Լսէ՛ որ դուն չես։

Տօն Ա. ինդնիրեն. Տիկինը կամաց մը անոր խօսեցաւ։

Ճէնարօ. Դուքս Ալֆոնս, զիս սը-

նուցանող Քալապրի ձկնորսները, զիս զօրաւոր և աներկիւղ ընելու համար մանկութեանս ատեն զիս ծովին մէջ մղլտելով, այս առակը սորվեցուցին ինձ, որով շատ անգամ մարդ իւր կեանքը վտանգի մէջ կրնայ դընել, բայց երբէք իւր պատիւը. — Լսածդ ըրէ, ըրածդ խօսէ։ — Դուքս Էլֆօնս, ձեր փնտռած անձը ես եմ։

Տօն Էլ. Տօնա Լուսրէցիային կողմը դառնալով. — Պսակեալ դուքսի խօսք տուած եմ ձեզի, տիկին։

Տօնա Լուքր. Մասնաւոր երկու խօսք ունիմ ձեզ ըսելու։

Դռոտը նշան կ'ընէ նուիրակին և պահապաններուն որ խալնաարին հետ մօտենալ սրահը թողուին։

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՏՕՆ ԱԼՖՕՆՍ. ՏՕՆԱ ԼՈՒՍՐԻՑԻԱ.

Տօն Էլ. Ի՛նչ պիտի ըսէք, տիկին։

Տօնա Լուք. Այն պիտի ըսեմ, Տօն Էլֆօնս, որ այն երիտասարդին մեռնիլը չեմ ուզեր։

Տօն Էլ. Վայրկեան մ'առաջ՝ մը-ըրկի պէս սենեակս մտաք լալով ու բարկութեամբ լցուած, ու ձեզի դէմ գործուած նախատանաց վրայ գանգատեցաք, երդմամբ և սպառնալեօք զան գործող յանցաւորին գլուխը խընդրեցիք, իմ դքսական խօսքս առիք, որ յանցաւորը ասկէ կենդանի դուրս չելլէ. ես ալ առանց նենդութեան իմ խօսքս տուի, բայց հիմա չէք ուզեր որ մեռնի։ — Ճշմարիտ կ'ըսեմ, տիկին, ասիկա նորօրինակ բան մ'է։

Տօնա Լուք. Պարոն դուքս, չեմ ուզեր որ ան երիտասարդը մեռնի։

Տօն Էլ. Տիկին, ինծի պէս ազնուականները սովորած չեն որ իրենց խօսքը գրաւի տակ դնեն. ես իմ խօսքս ձեզի տուի, պէտք է որ կատարեմ զան։ Երդում ըրէր էի որ յանցաւորը մեռցնել տամ, թող մեռնի ուրեմն։ Որոշեցէք, տիկին, ինչ կերպ կ'ուզէք որ մեռցընել տամ։

Տօնա Լուք. Ը-ուրն Ա ծիծաղելիմովը մը. Տօն Էլֆօնս, Տօն Էլֆօնս, Ճշմարիտը՝ դուն ալ ես ալ ըսածնիս չենք գիտեր։ Այս տարօրինակ բնութեամբ կին մ'եմ. ինչ ընեմ՝ յանցանքը հօրս է, որ զիս դեշ ըրաւ, ու մանկութենէս 'ի վեր իմ տեն հաճոյքս հնազանդեցաւ։ Մէկ քառորդ առաջ ուզածս հիմա չեմ ուզեր. զիտէք, Տօն Էլֆօնս, որ ես միշտ այսպէս եմ։ Ասիկ քիչ մը քովս, որ սիրով և խանդաղանք այր ու կին իրարու հետ խօսակցինք իրրև երկու սիրելի բարեկամներ։

Տօն Էլ. Նոյնպէս ը-ուրն դէմովը մը. Տօնա Լուքրէցիա, դուք իմ տիկինս էք, ու ես շատ երջանիկ եմ որ կը բարեհաճիք քիչ մը ատեն ձեր ոտից քով զիս ընդունելու։

Ամոր ժամը ին նոպի։

Տօն Լուք. Ի՛նչպէս աղէկ բան է իրարու խօսք հասկընալը. Ճշմարիտ, Էլֆօնս՝, ամուսնութեանս առաջին օրուան պէս կը սիրեմ զքեզ. կը յիշեմ տակաւին այն օրը, երբ այնպէս հանդիսաւոր կերպով իմ Վալանթինուա եղբօրս և ձեր կարդինալ Ֆիլիպդ տ'Լոթ եղբօր ընկերակցութեամբը Հռոմէ մտաք, փառաւոր

թագաւորի պէս ոսկեկուռ զարդերով զարդարուած գեղեցիկ Ճերմակ ձիով՝ նիզ, ու ես Ս. Պետրոսի պատշգամբին վրայէն զձեզ կը դիտէի։

Տօն Ա. Այն օրը դուք ալ խիստ գեղեցիկ էիք, տիկին, ու ձեր արծաթասպառ դիպակեայ զահերնուդ վրայ փառաւոր կ'երևնայիք։

Տօնա Լուք. Ո՛հ, ձեր վրայօք խօսեցած ատենս իմ խօսքս մի՛ ընէք, պարոն. յայտնի է որ Եւրոպայի բոլոր իշխանուհիները աշխարհիս ամենէն մեծ ասպետին հետ ամուսնանալուս համար կը նախանձին ինձմէ։ Եւ ես իրը տասնեւութը տարեկան կին մը կը սիրեմ զքեզ. դուք ալ գիտէք, այնպէս չէ՞, Տօն Ալֆոնս։ Բայց երբեմն ցուրտ կ'երևիմ ու անտարբեր. աս ալ իմ բնութենէս է և ոչ սրբտէս։ Աս բանիս համար եթէ մեղմով զիս յանդիմանէիք, անշուշտ բնութիւնս կը շտկէի։ Ի՞նչպէս աղէկ բան է սիրով ապրիլը. տուէք ինձ ձեռքերնիդ՝, Ալֆոնս. Ճշմարիտը ծաղրելի բան է, երբ կը մտածեմ որ երկու իշխան և իշխանուհի աշխարհիս ամենէն բարձր դքսական գահերուն վրայ քով քովի նստած՝ իրարու հետ սիրով ըլլան, ու մէկ թշուառ բաղդախնդիր Վենետիկցի հարիւրապետի մը համար իրարու հետ կռուիլ ուզեն։ Պէտք է վրընտռել այն մարդը ու անոր խօսքը անգամ չընել. ուր որ կ'ուզէ՝ թող երթայ, այնպէս չէ՞, Ալֆոնս. առիւծը և առիւծուհին Ճանճիկի մը վրայ բարկութիւններին չեն դրդռեր։ Դարձեալ կ'ըսեմ, Ֆէրարի դքսական պսակը ձեզմէ ուրիշ մէկու չվայլեր։ — Կեցէք, երթամ ըսեմ Պոթիսթային ձեր կողմէն որ աս Ճէնարօն իսկոյն Ֆէրարէն վռընտէ։

Տօն Ա. Ճապարելու հարկ չկայ։

Տօնա Լուք. Ը—արդ կերպարանքով. Ալ անոր խօսքը մի՛ ընէք, և աս գործը ինձ թողուցէք որ ես ուզածիս պէս կատարեմ։

Տօն Ա. Ո՛չ, աս գործը պէտք է որ իմ ուզածիս պէս կատարուի։

Տօնա Լուք. Բայց, Ալֆոնս, ինչ պատճառաւ կ'ուզէք որ աս մարդը մեռնի։

Տօն Ա. Ձեզի խօսք եմ տուած. թագաւորի մը երդումը նուիրական է։

Տօնա Լուք. Ա՛ս խօսքը ժողովրդեան կրնաք ըսել. բայց մեր մէջը խօսքը և երդումը ամենևին հետևութիւն մը չունին։ Ս. հայրը թէև խոստացեր էր Գաղղիոյ Կարոլոս Ը. թագաւորին որ Ալիքսիին սպանանէ, բայց իր խօսքին վրայ չկեցաւ. Պարոն Վալանթինուան երդմամբ պատանդ կեցած էր նոյն Կարոլոս Ը.ին քով. բայց այն երբ տիրի գաւառ՝ Գաղղիայի բանակէն փախաւ։ Դուք իսկ փէթրուքքինէրուն խոստացաք Սիենան վերստին իրենց դարձընել, բայց չըրիք, և ոչ պէտք իսկ էիք ընել։ Ուրիշ ո՞ր յիշեմ, երկրիս պատմութիւնը այսպիսի խոստմնազանցութիւնով լեցուն է։ Եթէ թագաւորները և ազգերը իրենց տուած խօսքը խըստութեամբ բռնէին, չէին կրնար այսօր կանգուն կենալ։ Մեր մէջը, Ալֆոնս, երդումը բան մը չի նշանակեր։

Տօն Ա. Տօնա Լուքրէցիա, երդումը. . . . .

Տօնա Լուբ. Ընհիմն պատճառները մէկ դի թողուցէք. ես յիմար չեմ. ըսէք ինձ, կ'աղաչեմ, աս Ճէնարոյին ոխ մը ունիք։ — Ո՛չ։ Ուրեմն անոր կեանքը ինձ շնորհեցէք, ինչպէս որ անոր մահը շնորհեր էիք։ Եթէ ես անոր կը նեռեմ, ձեզ ինչ վնաս ունի. նախատուողը ես եմ։

Տօն Ալ. Սիրելիս, զձեզ նախատելուն համար է որ չեմ ուզեր անոր նեռել։

Տօնա Լուբ. Եթէ կը սիրէք զիս, Ալֆոնս, ուղածիս չէ պիտի չըսէք։ Եթէ ես աս զթութեան գործը ընեմ՝ ժողովրդեան աւելի սիրելի պիտի ըլլամ, ու ես ալ այդ բանը կ'ուզեմ։ Գթասրտութիւնը, Ալֆոնս, թագաւոր մը Քրիստոսի կը նմանցընէ։ Ուրեմն զթասիրտ իշխաններ ըլլանք։ Խեղճ Իտալիան բաւական բռնաւորներ ունի։ Լացընենք, կ'աղաչեմ, սիրելի Ալֆոնս, սա Ճէնարոն ազատ թողուցէք։ Ատոյգ է, աս մէկ մտաց հաճոյք մ'է, բայց կնոջ մը մտաց հաճոյքը երբ գլուխ մը ազատելու համար է՝ նուիրական և բարձր է։

Տօն Ալ. Ընկարելի է, սիրելի Լուքրէցիա։

Տօնա Լուբ. Բայց վերջապէս ինչ պատճառաւ աս հարիւրապետին կեանքը ազատելու չնչին խնդիրքս շնորհելնիդ անկարելի պիտի ըլլայ։

Տօն Ալ. Պատճառը կը հարցընէք, սիրելիս։

Տօնա Լուբ. Այո՛, ինչ է պատճառը։

Տօն Ալ. Վասն զի աս հարիւրապետը ձեր տարփածուն է, տիկին։

Տօնա Լուբ. Ո՛վ Աստուած։

Տօն Ալ. Վասն զի զան գտնելու համար վենետիկ գացիք։ Վասն զի եթէ կարելի ըլլար դժոխք ալ պիտի երթայիք զայն գտնելու համար։ Վասըն զի ձեր անոր եռեռէն ինկած ատենը, ես ալ ձեր եռեռէն ինկեր էի։ Վասն զի զձեզ դիմակաւոր և շնչասպառ տեսայ, որ անամօթաբար անոր եռեռէն կը վազէիք։ Այսպէս որում նոյն աս ժամուս անոր վրայ արտասուալից աչօք նայեցայ. և անտարակոյս, տիկին, անոր անձնատուր եղած էք։ Այսպէս որում աս սեսակ անամօթութիւնը և անօրէնութիւնը պէտք է վերջանայ, և վասն զի ալ ժամանակ է որ ես ալ իմ վրէժս լուծեմ, և իմ անկողնոյս բոլորտիքը արեան փոս մը բանամ. կ'իմանաք հիմա, տիկին, թէ ինչ է պատճառը։

Տօնա Լուբ. Տօն Ալֆոնս։

Տօն Ալ. Լռեցէք։ Այսուհետև տարփածունուդ վրայ հսկեցէք, Լուքրէցիա, զիշերուան սենեակնիդ մըտնելու դրան առջև որ նուիրակը կ'ուղէք դրէք, բայց անկէ դուրս ելլելու դրան առջևը իմ դոնապանս պիտի կենայ, — որ է դահիճը։

Տօնա Լուբ. Պարոն, կ'երդնում...

Տօն Ալ. Մի՛ երդնուք. երդումը ժողովուրդին համար է. մի՛ ոչինչ պատճառներ ցուցընէք ինձ։

Տօնա Լուբ. Եթէ գիտնայիք...

Տօն Ալ. Շիտակը ըսեմ, տիկին, ձեր Պօրճիայի բոլոր պիղծ ընտանիքը կ'ատեմ, ամենէն աւելի զձեզ, որ այնչափ յիմարաբար սիրած եմ։ Վերջապէս կը խոստովանիմ ձեզ աս բանս.

երկուքնուս միաւորութեան պատճառաւ, իմ անուանի Լսթի ընտանիքս ձեր Պօրճիայի ալիզ ընտանեաց հետ միանալը ամօթալի, անլուռ և զարմանալի բան մ'է շիտակը։ Կը սոսկամ ձեր Կեսար եղբայրէն, որուն երեսին վրայ արեան բնական բիծեր կան, ձեր Կեսար եղբայրէն կ'ըսեմ, որ ձեր Յովհաննէս եղբայրը սպաննեց։ Կը սոսկամ ձեր Սպանիական անպարկեշտ պառաւ Իսաբելլա անօրէնն, որ Վալանս քաղաքը գայթակղեցընելէն ետև՝ Հռովմն ալ կը գայթակղեցընէ։ Իսկ ձեր Էրմոնէթա և Նէփի կեղծ եղբօրորդի դուքսերը ստուգիւ գողութեամբ վաստակած են իրենց դքսութիւնը։ Վերջացընեմ խօսքս՝ կը սոսկամ ձեր հայրէն, որ է Պապը, և որուն պալատը անհամար կինէրով լեցուն է. ձեր հայրը կ'ըսեմ, որ սուտ Քրիստոսն է աշխարհիս, որ թիավարաց բանտարկեալները և թէ կարդինալները կարմրազգեստ տեսած ատեն, մարդ կը շփոթի և չկրնար որոշել թէ որոնք են կարդինալները և որոնք թիավար բանտարկեալները։ — Հասկցաք հիմա ձեր ընտանեաց արժէքը։

Տօնա Լուք. Տէր իմ, տէր իմ, ծընրադրեալ և միացեալ ձեռօք կը խնդրեմ յանուն Յիսուսի և Ս. Մարիամու, յանուն ձեր հօրը և մօրը որ այս հարիւրապետին ազատութիւն շընորհէք։

Տօն Ալ. Տեսաք սիրահարութիւնը։ — Ընոր դիակը ինչ որ կ'ուզէք ըրէք, տիկին, բայց ես հիմա այս ժամուս կը պահանջեմ որ անոր գործը լմնայ։

Տօնա Լուք. Տէր իմ, շնորհք կը խնդրեմ Ճէնարոյի համար։

Տօն Ալ. Նթէ սրտիս մէջ ունեցած հաստատ առաջադրութիւնս գիտնաք, զան արդէն մեռած կարծելով ամենևին բերանդիդ պիտի չի բանաք։

Տօնա Լուք. Ո՛հ, զգուշացիք ըրածնէդ, Տօն Ալֆոնս Ֆէրարի, իմ չորրորդ ամուսինս։

Տօն Ալֆոնս. Ո՛հ, մի՛ վախցընէք զիս, տիկին, Ճշմարիտ ձեզմէ չեմ վախնար։ Նոյն ձեր բռնած ընթացքը գիտեմ. մի՛ կարծէք որ պիտի կրնաք զիս թունաւորել ձեր առաջին էրկան պէս, այն Սպանիացի ազնուականը, որուն անունը չեմք յիշեր ոչ ես և ոչ դուն։ Պիտի չկրնաք զիս վոնտել Յովհաննէս Սֆօրցա ձեր երկրորդ ապուշ ամուսնոյն պէս, որ Փէզարոյի իշխանն էր։ Պիտի չթողում որ և իցէ սանդուղի վրայ նիզակի հարուածներով զիս սպաննել տաք ձեր տղօր և երկչոտ Տօն Ալֆոնս տ'Ըրակոն երրորդ ամուսնոյն պէս։ Կը հասկնաք, տիկին, ես մարդ եմ, և Հէրքիւլէսի անունը շատ անդամ ընտանիքս կը կրէ։ Բոլոր քաղաքիս և բոլոր իշխանութեանս մէջ անթիւ զինուորներ ունիմ, ու ես ինքնս ալ զինուոր մի եմ, և Նափոլիի խեղճ թագաւորին պէս տակաւին իմ թնդանօթներս ձեր Պապ հօրը ծախած չեմ։

Տօնա Լուք. Աս ամէն խօսքերնուդ վրայ պիտի զղջաք, պարոն, կը մոռ-

նաք իմ ով ըլլալս . . . . :

Տօն Ալֆոնս . Շատ աղէկ կը ճանչնամ ձեր ով ըլլալը , բայց գիտեմ իսկ թէ ուր կը գտնուիք : Պապին աղջիկն էք , բայց Հռովմայ մէջ չէք . Ափոլէթի իշխանուհին էք, բայց Ափոլէթի մէջ չէք գտնուիր հիմա . այլ Ֆէբրարի դուքս Ալֆոնսին կինը , հըպատակը և ծառան էք , և Ֆէբրարի մէջ կը գտնուիք : (Տօնա Լուքրէցիա Բորգիա-Ինենն և սոսկոմն գոնապէալ, հասարակ նայուածքով դուռին կը նայի , և կամայ մը անոր առջևէն խաղաթղթով, սրտաբորոտ ախոռի մը վայ կ'էյնայ) : — Ո՛հ , ինչո՞ւ կը զարմանաք , և ինչո՞ւ կը վախնաք ինձմէ, տիկին . մինչև հիմա ես ձեզմէ կը վախնայի , բայց այսուհետև այսպէս պիտի ըլլայ , և ահա այսօրուընէ սկսելով, ձեր սիրահարներէն առաջինը ձեռքս անցաւ , պէտք է որ մեռնի :

Տօնա Լուք . փոքր յայնով. Ատաձենք քիչ մը նայինք , Տօն Ալֆոնս : Եթէ այս մարդն է այն քրէական յանցանքը գործողը , չկրնար մի և նոյն ժամանակը իմ տարփածուս ըլլալ :

Տօն Ա. Ինչո՞ւ չէ . կրնայ ըլլալ որ կամ արհամարհանօք , կամ բարկութեամբ, և կամ նախանձոտութեամբ մը աս գործը ըրած է , քանզի դուցէ նախանձոտ է , ինչ գիտնամ. ես կ'ուզեմ որ այս մարդը մեռնի . սիրտս այսպէս կ'ախորժէ : Աս բանիս չէք կրնար արդելք ըլլալ, տիկին . ըստ որում այս պալատը անձնանուէր գինուորներով լեցուն է , որոնց ձեռքէն չկրնար փախչիլ : Միայն անոր մահուան տեսակը ձեզ կը թողում, ան ալ դուք որոշեցէք :

Տօնա Լուք . Յե՜սուսը կնճռելով Ո՛վ Աստուած , ով Տէր իմ Աստուած :

Տօն Ա. Ձէք պատասխաններ , ուրեմն երթամ նախասենեակին մէջ պաշտօնի հարուածներով սպաննել տամ զան :

Կ'ուզէ դուրս ելլել, բայց Լուքրէցիա անոր ետևէն կը բռնէ :

Տօնա Լուք . Կեցի՛ք :

Տօն Ա. Ուրեմն կ'ախորժէ՞ք ձեր ձեռքով բաժակ մը Սիրակուզայի գինի մը տալ անոր :

Տօնա Լուք . Ո՛վ Ճէնարօ :

Տօն Ա. Այո՛ , պէտք է որ մեռնի :

Տօնա Լուք . Բայց ո՞չ սուրի հարուածներով :

Տօն Ա. Ինչ կերպով կ'ուզէք ըլլայ , հոգս չէ . դուք ո՞ր տեսակը կ'որոշէք :

Տօնա Լուք . Միւս տեսակը :

Տօն Ա. Աղէկ զգուշացիք որ չի սխալիք , և այն ոսկի սրուակէն լեցընէք : Աս ալ հոն պիտի ըլլամ, ու մի՛ կարծէք որ զձեզ պիտի առանձին թողում :

Տօնա Լուք . Շատ աղէկ , ուզածնուդ պէս կ'ընեմ :

Տօն Ա. Պօթիսթա : (Ներիոն կ'երթի) : Բանտարկեալը ներս մըտցուր նորէն :

Տօնա Լուք . Սոսկալի մարդ մ'էք եղեր , պարոն :

ՏԵՍԱՐԱՆԵ .

ՆՈՅՆԵՐԸ . ՃԷՆԱՐՕ . ՊԱՌԱՊԱՆՆԵՐ

Տօն Ա. Պարոն Ճ'էնարօ , իմացայ որ աս առտու ըրածդ անխոհեմու-

թեամբ և առանց զէշ դիտաւորութեան ըրեր ես, թող մեր դքսուհի տիկինը ներէ քեզի, ու դուն կրնաս ողջ առողջ Վենետիկ վերադառնալ։ Ստուած չընէ որ ես Վենետիկի հասարակապետութիւնը քեզի պէս հաւատարիմ ու քաջ ծառայէ մը զրկեմ։

Ճէնարօ. Երբախտաւոր եմ, տէր իմ, ձեր վսեմութեանը, ստուգիւ ամենևին աս վերհանձնութեան չէի սպասեր։ Գթութիւնը թագաւորական ցեղին առաքինութիւնն է, և Ստուած՝ աս աշխարհիս մէջ ներողին՝ իրեն ալ երկինքը կը ներէ։

Տօն Ա. Հարիւրապետ, հասարակապետութեան տակ ունեցած պաշտօնէդ գոհ ես, և ինչ վարձք կ'առնուս տարին։

Ճէ. Հրամանիս տակը յիսուն զինուոր ունիմ, պարոն, որոնց ծախքը ես կը հոգամ։ Մեծափառ հասարակապետութիւնը, առանց պարգևները հաշուելու, տարին երկու հազար Վենետիկի ոսկի կու տայ ինձ։

Տօն Ա. Եթէ քեզ չորս հազար ոսկի տամ, իմ ծառայութեանս տակը կու գա՞ս։

Ճէ. Ձեմ կրնար. տակաւին հինգ տարի ունիմ հասարակապետութեան ծառայութեան տակը. որուն հետ կապուած եմ։

Տօն Ա. Ինչպէս կապուած ես։

Ճէ. Երդմամբ։

Տօն Ա. կամաց մը Տօնա Լուքրէցիա. Կ'երևի թէ աս մարդիկը իրենց երդումը կը պահեն, տիկին։ (Բարձր ձայնով). — Գոյնէնք աս խօսքերը, պարոն Ճէնարօ։

Ճէնարօ. Կեանքս ազատելու համար ամենևին վատութիւն մը ըրած չեմ, բայց որովհետև ձեր վսեմութիւնը ինձ կը ներէ, հիմա ըսեմ։ Ձեր վսեմութիւնը կը յիշէ ասկէ երկու տարի առաջ Ֆայէնցայի յարձակումը։ Աս սպառազինի մէջ ձեր դուքս հայրը մեծ վտանգի մէջ էր, և քիչ մնաց պիտի սպաննէին զան. բայց բաղդախնդիր զինուոր մը անոր կեանքը ազատեց։

Տօն Ա. Այո՛, և մինչև հիմա այն զինուորը չգտնուեցաւ։

Ճէնարօ. Ես էի այն զինուորը, տէր իմ։

Տօն Ա. Ճշմարիտ, հարիւրապետ, աս բանս վարձատրութեան արժանի է։ Ընդունէ ուրեմն աս ոսկւով լիցուն քսակը։

Ճէն. Մինչ հասարակապետութեան ծառայութեան տակը մնած ատենս երդում կ'ընենք որ օտար իշխաններէն ամենևին տակ չընդունինք։ Այսու ամենայնիւ, եթէ ձեր վսեմութիւնը կը ներէ, այդ քսակը կ'առնում, և այս քաջ զինուորներուն կը բաժնեմ։

Զինուորները ի շուրջն։

Տօն Ա. Ինչպէս որ կ'ուզես՝ այնպէս ըրէ։ (Ճէնարօ քսակը կ'առնու). — Ուրեմն 'ի նշան բարեկամութեան մեր նախնեաց հին սովորութեան համաձայն Սիրակուզայի բաժակ մը գինի խմենք մէկտեղ։

Ճէն. Շատ աղէկ, պարոն։

Տօն Ա. Հայրս ազատելուդ փոխարէն զքեզ պատուելու համար, կ'ուզեմ որ նոյն ինքն դքսուհի տիկինը ի

ձեռօքը քեզ դինին լեցրնէ։ (Ճենա-
ր՝ կը խառնուի և կ՚երթայ ոսկիները չի-
ո՞ւրներո՞ւն բաժնելը— Լուսորոնին ներսի
կողմը։ Դռոսը կը կանչէ)։ — Ռուսթիչէլ-
չէլ։ (Ռուբիչելօն ափսեով ներս կը մտնէ)։ Ափսէն այդ սեղանին վրայ դիր։
(Տօնա Լուրէցիայէն յետոյ Բոնելով)։
— Տիկին, մտիկ ըրէք ինչ պիտի ը-
սեմ աս մարդուն։ — Ռուսթիչէլ-
դարձիր սուրդ մերկ ձեռքդ բռնած
դրան ետին սպասէ, ու երբ զանգա-
կին ձայնը լսես, ներս մտիր։ (Ռ-
ուբիչելօ կը հեռանայ և դրան ետին կը պա-
հուի)։ — Տիկին, ձեռքովիդ աս ե-
բիտասարդին բաժակը լեցուցէք, բայց
նայեցէք որ աս ոսկի սրուակէն դնէք։

Տօնա Լուր։ Դեղնաց և փոքր յայնով
մը։ Այո՛, թէ որ պիտանայիք թէ աս
միջոցին ինչ սոսկալի գործ է ըրած-
նիդ, որչափ ալ անողորմ ըլլայիք,
պիտի սոսկայիք ստուգիւ։

Տօն Ան։ Նայեցէք որ սրուակը առ-
նելու ատեննիդ չսխալիք։ — Նկու-
նայինք, հարիւրապետ։

Ճ՛ռ։ Ամէն չափ երախտեաց համար
ամօթասարտ եմ ձեզ, պարոն։

Տօն Ան։ Տիկին, պարոն Ճենարոյին
բաժակը լեցուցէք։ — Պարոն հա-
րիւրապետ, քանի՞ տարեկան ես։

Ճ՛ռ։ Մ-ռ բ-ծ-ի-ի-ը ռ-ն-ը-ը՝ դ-ռ-
ռ-ռ-հ-ա-ն կը ներկայացնէ։ Չ-ան տա-
րեկան, տէր իմ։

Տօն Ան։ կամաց մը դ-ռ-ռ-հ-ա-ն, որ
ուրիշներէն սր-ռ-ակը ռ-ն-ել ռ-ղեր էր։
Ոսկի սրուակէն լեցուցէք, տիկին։
(Լ-ուրէցիա դողալով ոսկի սր-ռ-ակը
կ՚-ռ-ռ-)։ Կ՚երևի թէ սիրահար ու-
նիս։

Ճ՛ռ։ Ո՞վ չունի, տէր իմ։

Տօն Ան։ Ճշմարիտ, տիկին, մեծ
անկթութիւն մ՚է աս հարիւրապետը
իւր կեանքէն, իւր սիրուհիէն, և Ի-
տալիոյ արևէն զրկել իւր քսանամեայ
ծաղիկ հասակին մէջ, տօնախմբու-
թեանց, ծպտեալ պարահանդէսնե-
րու, և Վենետիկի զուարթ բարե-
կենդանութեանց ժամանակ։ Որոց մէջ
այնչափ ամուսիններ կը խաբուին, և
աս մարդը զեղեցիկ կիներէն զրկելը
անիրաւութիւն է, այնպէս չէ՞, տի-
կին, քանզի կրնայ զանոնք սիրել
կամ անոնցմէ սիրուիլ։ Լեցուցէք ու-
րեմն, տիկին, հարիւրապետին բա-
ժակը որ խմէ։ — Եթէ տակաւին մը-
տածէք, հիմա Ռութիչէլօն ներս կը
կանչեմ։

Լ-ուրէցիա տառոց իսու մը խօսելու ձեռքովին
բաժանը ետ ուղղէ։

Ճ՛ռ։ Շնորհակալ եմ, Տէր իմ, որ
իմ խեղճ մօրս համար կենացս խնա-
յեցիք։

Տօնա Լուր։ Ինչպիրէն։ Ո՛հ, աս
ինչ սոսկալի բան է։

Տօն Ան։ Խմելով։ Կենացդ, հարիւ-
րապետ Ճենարո, շատ տարիներ ապ-
րէ։

Ճ՛ռ։ Ստուած ձեր տարիները ա-
ւելցընէ, տէր իմ։

Կը խմէ։

Տօնա Լուր։ Ինչպիրէն։ Ով տէր։

Տօն Ան։ Ինչպիրէն։ Լ-ռնցաւ։ (Ռ-ուբ-
իչէլ յայնով)։ Ուրեմն մնաս բարեաւ,
հարիւրապետ, երբ որ կ՚ուզես՝ կրնաս
Վենետիկ մեկնիլ։ (Կամաց յայնով Տօ-
նա Լուրէցիային)։ Տիկին, շնորհակալ
եղիք։ որ անոր հետ մինակ կը թո-

ղում զձեզ։ Կարելի է որ բարեմաղ-թութիւններ ունիք անոր ընելու. թէ որ կ'ուզէք, իր կենաց վերջին վայրկենին մէջ անոր հետ ապրեցէք։

Դուրս գնաց, և պահապանները իրեն հետ գնացին։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՏՕՆԱ ԼՈՒՔՐԵՑԻԱ. ՁԵՆԱՐՕ

Բանաթիչէլը միշտ գաղանի դրան եռին անշարժ կեցած է։

Տ. Լ. ուք. Ճէնարօ. Թունաւորեցար։

Ճ. Ի՛նչ, թունաւորեցայ, տիկին։

Տ. Լ. ուք. Այո՛, թունաւորեցար։

Ճ. Գինին ձեռքովդ լեցընելուդ համար պէտք էի տարակուսիլ։

Տ. Լ. ուք. Ո՛հ, մի՛ սիրաս այդչափ վիրաւորեր, Ճէնարօ։ Մի՛ այդպէս ոյժս կտրեր, որուն քանի մը վայրկեան ևս հարկաւորութիւն ունիմ։ Մտիկ ըրէ ինձ։ Դուքսը քեզմէ կը նախանձի, և կը կարծէ որ ինձ սիրահարած ես. ուստի որոշեց որ կամ իմ առջիս դաշյնով գքեզ սպաննեն, և կամ ձեռքս ես զքեզ թունաւորեմ. Սոսկալի թոյն մը, Ճէնարօ, թոյն մը, որուն անունէն բոլոր Իտալիա վերջին քսան տարիներուն պատմութիւնը յիշելով կը սոսկայ։

Ճ. Այո՛, Պօրճիաներուն թոյնէն։

Տ. Լ. ուք. Այո՛, նոյն թոյնէն խըմեցիր դուն, որուն անդեղայն (գէնէրիր) ինձմէ և Վալանդինուա Պալէն զատ մէկը չգիտեր աշխարհիս մէջ։ Տես ևս սրուակը որ միշտ մէջս կը պահեմ։ Քու կեանքդ, առողջութիւնդ և պաշտպանութիւնդ, Ճէնարօ, ևս սրուակին մէջն է։ Միայն կաթիլ մը շրթանցդ դպցուր, ու կ'ազատիս։

Լուրէնցիա սրուակը անոր բերանին կը մօտեցընէ. բայց ձեռքը կը դողայ։

Ճ. Հապա՞ ինչպէս անոր նայելովդ. Տիկին, ինչ գիտնամ որ ևս տուածդ թոյն չէ։

Տ. Լ. ուք. Նո՞ր ալիոտին վրայ էյնալովդ. Ո՛վ տէր, Ո՛վ տէր Աստուած։

Ճ. Ընունդ Լուքրէցիա Պօրճիա չէ՞ մի, կը կարծես որ Պօրճիաներուն պատմութիւնը չեմ գիտեր. կը յիշեմ իշխանի մը պատահածը, երբ հաւատացուցին իրեն թէ Կարոլոս Բ. էն թունաւորուած է, և մէկը անոր անդեղայ մը տուաւ, և նոյն անդեղայէն իշխանը մեռաւ. այն անդեղան տուող ձեռքը ահա նոյն ևս սրուակը բռնողն է, և զայն խմելու համոզող բերանը հիմա ինծի հետ կը խօսի։

Տ. Լ. ուք. Ո՛հ, ինչ թշուառ կին մ'եմ եղեր ես։

Ճ. Մտիկ ըրէ, տիկին. ես քու կեղծ սիրահարական խօսքերէդ չեմ խաբուիր, այդ երեսիդ վրայ յայտնի կ'երևի որ իմ վրաս գէշ գիտաւորութիւն մը ունիս, և չեմ գիտեր ինչ պատճառաւ չես ուզեր երբեք ինձ ըսել։ Քու ընտանիքդ իմս ճանչնալ պէտք է, և կարելի է ևս ժամուս գիս թունաւորելովդ մէկ ուրիշէն վրէժ առնել է միտքդ. բայց, ո՞վ գիտէ, գուցէ մօրմէս վրէժ առնելու համար կ'ընես։

Տ. Լ. ուք. Ո՛վ Ճէնարօ, մօրդ վրայ ուրիշ կարծիք ունիս։ Ինչ պիտի ընէիր թէ որ մայրդ ինծի պէս յան-

ցաւոր կին մը ըլլար։

Ճէ. Մի զրպարտեր զան. ոչ, ոչ, իմ մայրս քեզ չնմանիր, տիկին Լուքրեցիա. զան իմ սրտիս մէջ կ'ըզգամ, մտացս մէջ կ'երազեմ, ու անոր պատկերը աչքիս առջևն է։ Պիտի ատեմ զան թէ որ ինձ արժանի չըլլայ, պիտի ատեմ զան թէ որ քեզ նմանի։ Բայց ոչ, ոչ, սրտիս մէջ կ'ըզգամ որ մայրս արդի կանանց պէս ազգապիղծ, զեղխ, թունաւորող հրեշ մը չէ։ Ո՛հ, ստոյգ եմ, որ եթէ աշխարհիս մէջ խիստ անմեղ, խիստ առաքինի և սուրբ կին մը կայ՝ մայրս է, անշուշտ դուն ալ կը ճանչնաս զան, տիկին Լուքրեցիա, շիտակը ըսէ։

Տօնա Լուք. Ո՛չ, Ճէնարօ, մայրդ չեմ ճանչնար։

Ճէ. Բայց ինչու ես այս խօսքերը քեզ կը խօսիմ. մօր մը ուրախութիւնները և տրտմութիւնները քեզ ինչ ազդուութիւն պիտի ընեն։ Շատ երջանիկ ես որ զաւակ չես ունեցեր, ըստ որում եթէ զաւակ ունեցած ըլլայիր, անոնք զքեզ պիտի ուրանային, տիկին։ Ո՞ր ամենաթշուառ անէծը կ'ուզէ այսպիսի մայր մը ունենալ. Լուքրեցիա Պօրճիայի զաւակ ըլլալ ու Լուքրեցիա Պօրճիան մայր կոչել, ո՛հ, անտանելի է.....։

Տօնա Լուք. Ճէնարօ, թունաւորուած ես, դուքսը զքեզ մեռած կարծելով ամեն վայրկեան կրնայ եւ դառնալ։ Միայն ան կը մոռանամ որ դուն աղատիս և ասկէ փախչիս, բայց դուն այնպիսի սոսկալի խօսքեր կ'ընես ինձ, որ ես ապշած ու պակուցեալ զանոնք լսելէն ուրիշ բան չեմ ըներ։

Ճէ. Տիկին.....։

Տօնա Լուք. Մի երկնցրներ, կ'աղաչեմ, ինչ որ կ'ուզես ըրէ, թշնամանէ ու նախատէ զիս, բայց խմէ զաս շուտով, քանզի թունաւորուած ես։

Ճէ. Ինչպէս հաւատամ քեզ, տիկին, դուքսը խաբեբայ չէ, ու ես ամոր հօրը կեանքը ազատեցի. բայց ես քու պատուոյդ դպցայ, ու դուն կրնաս վրէժդ լուծել։

Տօնա Լուք. Քեզմէ՛ վրէժ լուծել, Ճէնարօ. կենացդ վրայ մէկ ժամ աւելցընելու համար բոլոր իմ կեանքս կու տամ. աւելի աղէկ կ'ուզեմ արիւնը հոսեցնել քան աչքէդ մէկ կաթիլ արցունք թափելը տեսնել, աւելի կ'ուզեմ անարդ տեղ նստիլ ու զքեզ զահը նստեցընել, զքեզ երջանիկ տեսնել, ու ոտիցդ ներքև անտրտունջ քեզ ծառայել, ով իմ սիրելի Ճէնարօս։ Գիտցած եղիր որ իմ թշուառ սիրտս միայն քեզմով լցուած է։ Ով Ճէնարօ, ժամանակը կարճ է, թոյնը կը քալէ, հիմա անոր ազդուութիւնը պիտի զգաս, ո՛հ, քիչ մը ես ուշացընես, ժամանակը անցած պիտի ըլլայ։ Ես վայրկենիս մէջ կեանքը առջիդ երկու մութ անջրպետներ կը բանայ, որոց մէկը միայն քանի մը վայրկեան ունի, և միւսը տարիներ։ Պէտք ես ասոնց երկուքին մէկը որոշել, բայց ասոնց ընտրութիւնը սոսկալի է. վստահ եղիր ինձ ու զուլթ ունեցիր քու և իմ վրաս, Ճէնարօ։ Աստուծոյ սիրոյն, խմէ շուտով։

Ճէ. Շատ աղէկ, բայց եթէ ասոնց գործոյն մէջ մեղք մը կայ, գլուխդ թող թափի։ Սանտանանդ որ՝ ըսածդ

Ճէ. Տիկին.....։

Տօնա Լուք. Մի երկնցրներ, կ'աղաչեմ, ինչ որ կ'ուզես ըրէ, թշնամանէ ու նախատէ զիս, բայց խմէ զաս շուտով, քանզի թունաւորուած ես։

Ճէ. Ինչպէս հաւատամ քեզ, տիկին, դուքսը խաբեբայ չէ, ու ես ամոր հօրը կեանքը ազատեցի. բայց ես քու պատուոյդ դպցայ, ու դուն կրնաս վրէժդ լուծել։

Տօնա Լուք. Քեզմէ՛ վրէժ լուծել, Ճէնարօ. կենացդ վրայ մէկ ժամ աւելցընելու համար բոլոր իմ կեանքս կու տամ. աւելի աղէկ կ'ուզեմ արիւնը հոսեցնել քան աչքէդ մէկ կաթիլ արցունք թափելը տեսնել, աւելի կ'ուզեմ անարդ տեղ նստիլ ու զքեզ զահը նստեցընել, զքեզ երջանիկ տեսնել, ու ոտիցդ ներքև անտրտունջ քեզ ծառայել, ով իմ սիրելի Ճէնարօս։ Գիտցած եղիր որ իմ թշուառ սիրտս միայն քեզմով լցուած է։ Ով Ճէնարօ, ժամանակը կարճ է, թոյնը կը քալէ, հիմա անոր ազդուութիւնը պիտի զգաս, ո՛հ, քիչ մը ես ուշացընես, ժամանակը անցած պիտի ըլլայ։ Ես վայրկենիս մէջ կեանքը առջիդ երկու մութ անջրպետներ կը բանայ, որոց մէկը միայն քանի մը վայրկեան ունի, և միւսը տարիներ։ Պէտք ես ասոնց երկուքին մէկը որոշել, բայց ասոնց ընտրութիւնը սոսկալի է. վստահ եղիր ինձ ու զուլթ ունեցիր քու և իմ վրաս, Ճէնարօ։ Աստուծոյ սիրոյն, խմէ շուտով։

Ճէ. Շատ աղէկ, բայց եթէ ասոնց գործոյն մէջ մեղք մը կայ, գլուխդ թող թափի։ Սանտանանդ որ՝ ըսածդ

եթէ ճշմարիտ ըլլայ և եթէ սուտ, իմ կեանքս այդչափ վիճելու չարժեր։ Տուր ինձ որ խմեմ։

Սրոսիէ Ֆառնոս և Էլիզ։

Տօնա Լուբ. Աղատեցար. հիմա պէտք ես ձիդ հեծնալ, ու ամենայն փութով Վենետիկ դառնալ։ Սատակ ունիս։

Ֆ. Ունիմ։

Տօնա Լուբ. Դուքսը զքեզ մեռեալ կը կարծէ, ուստի դիւրին է քու փախուստդ անորմէ պահելու։ Ա՛ռ սա սրուակը, ու միշտ քովդ պահէ. այնպիսի ժամանակի մէջ կ՚ապրինք, որ ամէն կերակուրներու մէջ կրնան թոյն դնել։ Մանաւանդ դուն պէտք ես խիստ զգուշանալ։ Հիմա դնա շուտով։ (Գաղտնի դռոտը կիսովմը կը բանայ). — Սա սանդուղքն իջիր, որ Կէկրօնիի պալատին բակը կը տանի, ուրկէ դիւրութեամբ կրնաս փախչիլ։ Բայց չըլլայ թէ ժամանակ անցընես, և ոչ իսկ կէս ժամ։ Խսկոյն Ֆէբարէն դուրս ելիր՝ բացաւալ Սոդոմէն ելլելու պէս ամենևին ետիդ չնայելով։ — Երթա՛ս բարով։ — Բայց կեցէ՛ր, վերջին խօսք մ՚ունիմ քեզ ըսելու, սիրելի Ֆէնարօ։

Ֆ. Խօսէ, տիկին։

Տօնա Լուբ. Ա՛ս վայրկենիս քեզմէ զատուելով գուցէ մէկ մ՚ալ պիտի չի կրնամ զքեզ տեսնել. բայց չըլլայ որ ասկէ ետև զիս տեսնել ուզես, թէև իմ միակ երջանկութիւնս այս է. ինչու որ գլուխդ վտանգի մէջ պիտի դնես։ Ահա ուրեմն աս կենաց մէջ բոլորովին իրարմէ պիտի բաժնուինք, ափսո՛ս, ու շատ հաւատի եմ որ միւս աշխարհին մէջնալ զիրար պիտի չի տեսնենք։ Ո՛վ Ֆէնարօ, ինձմէ այսպէս յաւիտեանս բաժնուելէդ առաջ քաղցր խօսք մը պիտի չլսօսիս ինձ։

Ֆ. Ա՛ստուծոյ խիստ լաւ, Տիկին....։

Տօնա Լուբ. Վերջապէս կեանքդ աղատեցի։

Ֆ. Դուն ես ըսողը, բայց ինձ համար մութ է. չեմ գիտեր թէ ինչ ըսեմ, տիկին. ամէն բան կը ներեմ, բայց 'ի մէկ բանէ։

Տօնա Լուբ. Ի՞նչ բան։

Ֆ. Երդում ըրէ ինձ աշխարհի մէջ քեզի ամենէն սիրելի եղած բանին վրայ, թող իմ սիրոյս համար ըլլայ, ըստ որում զիս կը սիրես, իմ հոգւոյս յաւիտենական աղատութեան համար երդում ըրէ որ մօրս թշուառութեան ամենևին մասնակից չես։

Տօնա Լուբ. Ըեմ կրնար այդ երդումը ընել, Ֆէնարօ։

Ֆ. Ո՛հ, մայր իմ, մայր իմ. ահա քու թշուառութեանդ պատճառ եղող ահռելի կինը աս է։

Տօնա Լուբ. Ֆէնարօ....։

Ֆ. Բերանովդ խոստովանեցար, տիկին, ճնաս բարով։ Ընդհանալ ըլլաս։

Տօնա Լուբ. Եւ դուն, Ֆէնարօ, օրհնեալ ըլլաս։

Ֆէնարօ դուրս կ՚ելլէ. Լուսրէցիոն ալեռին վրայ նոսաղիալ ի՛ինայ։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ֆիլիպի փրադարակը դրսական դատաշղամբոջ մէկ կոցմը, եւ Ճենարօյի տունը միւս կոցմը։ – Գիշեր է։

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՏՕՆ ԱԼԻՃՕՆՍ.
ԲՈՒՍԹԻՍԷԼԼՕ՝ վերակուսով ծածկուած։

Բուս. Այո՛, տէր իմ, այսպէս է. ղաւ, չեմ գիտեր թէ ինչ կախարդիչ ըմպելիքով մը զան մահուանէ ազատեց, և Կէկրօնիի պալատին բակէն փախցուց։

Տօն Ալ. Լաւ ինչպէս համբերեցիր ատոր։

Բուս. Ի՞նչ կրնայի ընել. տիկինը դուռին պարզունակը գրեր էր, ու ես փակուած մնացեր էի հոն։

Տօն Ալ. Պէտք էիր դուռը խորտակել։

Բուս. Կաղնի դուռը և երկաթի պարզունակը խորտակելը դիւրին բան չէ։

Տօն Ալ. Այո՛, պէտք էիր պարզունակը խորտակել, կ'ըսեմ, ներս մտնել, ու զան սպաննել։

Բուս. Համարեցէք թէ կարենայի դուռը խորտակել, տիկին Լուքրէցիան իր անձովը զան պիտի պատսպարէր. ան ժամանակը պէտք էր տիկին Լուքրէցիան ալ սպաննել։

Տօն Ալ. Շատ աղէկ պիտի ընէիր։

Բուս. Ընոր համար հրաման չունէի, տէր իմ։

Տօն Ալ. Բուսթիսէլլօ, բարի ծառաները իշխաններուն միտքը կը հասկընան առանց անոնց խօսել տալու։

Բուս. Ընկէ զատ Ձեր բարձրութեան և Պապին մէջ դժտութիւն ծագելէն վախցայ։

Տօն Ալ. Ընմիտ ես եղեր դուն։

Բուս. Դժուար խնդիր մ'է այս, տէր իմ, դիւրին չէ Պապին աղջիկը սպաննել։

Տօն Ալ. Ուրեմն թէ որ պիտի չիմացընէիր, չէիր կրնար պոռալ, կանչել, ինձ իմաց տալ, ու արգիլել սիրահարին որ չփախչի։

Բուս. Այո՛, իրաւունք ունիք, բայց վաղը Ձեր բարձրութիւնը տիկին Լուքրէցիային հետ հաշտուելուն պէս՝ հեռաւոր օրը տիկինը զիս կախել կու տայ։

Տօն Ալ. Բաւական է. տակաւին ժամանակ ունինք ըսիր։

Բուս. Այո՛, տեսէք իւր պատուհանին լոյսը, Ճէնարօ տակաւին չէ մեկներ։ Ընոր ծառան, որուն սիրտը դքսուհին շահեր էր, և զոր հիմա ես շահեցայ, ամէն բան ըսաւ ինձ։ Ան միջոցիս պատնէշին ետին երկու թամբեալ ձիերով իւր տիրոջը կ'ըսպասէ։ Ճէնարօն հիմա դուրս պիտի ելլէ՝ իւր ծառային հետ փախչելու։

Տօն Ալ. Դիշերը մութ է. իւր տանը անկիւնը կը պահուինք, ու անցնելու ատենը կ'ըսպաննենք զան։

Բուս. Ինչպէս կ'ուզէք՝ այնպէս կ'ընենք։

Տօն Ալ. Սուրդ ընտիր է։

Բուս. Այո՛։

Տօն Ալ. Դաշոյն ունիս։

Բուս. Երկու բան դժուար է զըտնել աս աշխարհիս մէջ. առանց դաշոյնի Իտալացի մը, և առանց սիրահարի Իտալացի կին մը։

Տօն Ա. Հատ աղէկ ուրեմն, երկու ձեռքով զարկ։

Ռուս. Տէր իմ դուքս, ինչո՞ւ համար զան բռնելով՝ արքունական դատաստանաւ կախել չէք տար։

Տօն Ա. Վենետիկի հպատակ ըլլալուն, աս բանս հասարակապետութիւնը պատերազմի հրաւիրել է։ Բայց դաշնոյնի հարուածի մը ուրկից դալը չդիտցուիր, և յանցանքը մէկու վրայ չիյնար։ Թունաւորելը աւելի աղէկ էր, բայց չյաջողեցաւ։

Ռուս. Ուրեմն երթամ չորս նուիրակ կանչեմ, տէր իմ, որ զան ըսպաննեն, որպէս զի դուք վտանգի մէջ չիյնաք։

Տօն Ա. Սիրելիս, Մաքիավէլ շատ անգամ ըսած է ինձ որ այսպիսի պարագաներու մէջ աւելի աղէկ է որ իշխանները իրենց գործքը ձեռքովին կատարեն։

Ռուս. Տէր իմ, մարդու ոտքի ձայն կայ։

Տօն Ա. Պատին երկայնութեամբը կանգնինք։

Սրուերին մէջ պապչիամբին պանը կը պատ՝ուին։ - Մաֆիո պօնախմբուրեան ղեկոպով Ֆերէ-ռի։ ու երգելով Ֆերիոյ ձեռաշրջի դուռը կը դրնէ։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՏՕՆ ԱԼՖՈՆՍ և ԲՈՒՍՔԻԼԼՕ՝ պահուած։ ՄԱՖԻՕ. ՃԷՆԱՐՕ.

Մաֆ. Ճէնա՛րօ։

Դուռը կը բացուի, և Ճէնարօ Ֆերիի։

Ճէ. Դո՞ւն ես, Մաֆիո. կ՚ուզէ՞ս ներս մտնել։

Մաֆ. Ո՛չ, երկու խօսք ունիմ քեզ ըսելու. սատուդիս որոշած ես այս գիշեր Նեկրօնի իշխանուհոյն տունը ընթրիքի չդալու։

Ճէ. Ես հրաւիրուած չեմ։

Մաֆ. Ես զքեզ կը ներկայացնեմ անոր։

Ճէ. Ուրիշ պատճառ մը ունիմ, որն որ քեզ միայն կրնամ ըսել. այս գիշեր ճամբայ պիտի ելլեմ։

Մաֆ. Ի՞նչպէս։

Ճէ. Այո՛, մէկ քառորդէն։

Մաֆ. Ինչո՞ւ համար։

Ճէ. Վենետիկ կ՚ըսեմ քեզ պատճառը։

Մաֆ. Սիրո՞յ պատճառաւ։

Ճէ. Այո՛։

Մաֆ. Ա՞յդպէս կը սիրես զիս, Ճէնարօ։ Մենք երդում ըրեր էինք որ ամենևին իրարմէ չզատուինք, իրարմէ ամենևին չբաժնուինք, իրարու եղբայր ըլլանք, և ահա դու հիմա առանց ինձ կը մեկնիս։

Ճէ. Դուն ալ հետս եկու։

Մաֆ. Դուն պէտք ես հետս դալ։ — Աւելի աղէկ է գեղեցիկ կանանց և զուարթ կոչնականներու հետ գիշերը սեղան նստիլ, քան լեռներու և աւազակներու մէջէն ճանապարհորդութիւն ընել։

Ճէ. Ես առտու Նեկրօնի իշխանուհոյն ընթրիքին վրայօք սաղդ չէիր գիտեր։

Մաֆ. Հարցուցի իմացայ, ժէփօ իրաւունք ունի. Նեկրօնի սքանչելի և զուարթ կին մ՚է եղեր, որ երաժշտութիւնը և երգերը կը սիրէ. ճանապարհորդութիւնդ ձգէ ու հետս եկու կ՚ըսեմ։

Ճ՛Ն. Ընե՞մ կրնար։

Մաֆ. Գիշեր ժամանակ ճամբայ ելլելով, ինքզինքդ սպաննել պիտի տաս։

Ճ՛Ն. Ընկերոգ եղիր, երթաս բարով. բարի ղուարճութիւն։

Մաֆ. Ճ՛ենարո եղբայր, ես այս ճանապարհորդութեանդ վրայ ոչ կարծիք ունիմ։

Ճ՛Ն. Մաֆիո եղբայր, ես ալ քու ընթրիքիդ վրայ ոչ կարծիք ունիմ։

Մաֆ. Ինչպէս չեղած ատենս թէ որ ղլուխդ փորձանք մը գալու ըլլայ։

Ճ՛Ն. Ո՞վ գիտէ որ այս իրիկուն գքեզ մինակ ձգելուս համար վաղը պիտի չզղջամ։

Մաֆ. Ընդէկ ըսիր. ուրեմն իրարմէ չզատուինք. ու երկուքնիս ալ քիչ մը իրարու խօսք մտիկ ընենք։ Եկու այս գիշեր հետս Ն՛էկրօնիին երթանք, և վաղը առտու լուսնալուն պէս՝ մէկ տեղ կը մեկնինք, գո՞հ ես։

Ճ՛Ն. Ուրեմն պատմեմ քեզի, Մաֆիո, իմ յանկարծ մեկնելուս պատճառները. դուն վնասէ իրաւունք չունիմ արդեօք։

Մաֆիո մտիկ ընէ ամէն ոչ ամոր ախանջին ետ խօսի։

Բուս. Պոլգամբին գալէն կամայ մը Տոն Ալֆոնսին. վրանին յարձակինք, տէր իմ։

Տօն Ա. Կեցէր վերջը նայինք։

Մաֆ. Ճ՛ենարոյի պապամ-Լիբան վրայ Բուրժոյոյն ծիծաղելով. Շիտակը ըսեմ քեզ, Ճ՛ենարո, պարզամիտ ես եղեր։ Ես ամէն գործին մէջ ոչ թոյն կայ, ոչ անգեղայ. այլ պարզ կատակերգութիւն մ՛է։ Լուբրէցիա տիկինը չափազանց սիրահարած է քեզ, և ուզած է հաւատացընել թէ քու կեանքդ ազատեց, յուսալով որ գքեզ երախտագիտութենէ 'ի սէր շահի։ Գուքսը բարի մարդ մ՛է, ու անկարող է որ և իցէ մէկը թունաւորելու կամ սպաննելու. ասկէ զատ՝ ինքը գիտէ որ դուն իւր հայրը ազատեցիր։ Դքսուհին կ՛ուզէ որ ասկէ մեկնիս, խելքի դէմ չէ, ըստ որում իւր սէրը Վենետիկի մէջ աւելի դիւրութեամբ 'ի գործ պիտի դնէ քան թէ Ֆէրարի մէջ։ Վանդէ իւր ամուսինը միշտ զան քիչ մը կը նեղէ։ — Բայց Ն՛էկրօնիի ընթրիքը ղուարճալի պիտի ըլլայ, դուն ալ պէտք ես գալ մեզի հետ. քանզի մոռածենք քիչ մը, և պարապ տեղը չխօսինք. դուն գիտես որ ես խորագէտ եմ և բարեխորհուրդ. Պօրճիաներու քանի մը երևելի ընթրիքներու մէջ ամենասպառուական գինիով իրենց խիստ մտերիմ բարեկամները թունաւորելը արդեօք չկրնար ըլլալ որ ես ընթրիքին մէջ չգտնուինք։ Իրաւունք է կարծելը թէ Սիրակուզայի աղնիւ գինիին մէջ միշտ թոյն կայ, և Իտալիոյ ամէն զեղեցիկ իշխանուհիներուն եաին Լուքրէցիա Պօրճիա։ Այս ինչ պատուական և բարբանջական զրոյց է. ուրեմն ես հաշուով միայն կամ ուտող տղաքը ապահով են իրենց կերածին վրայ, և կրնան հանդստութեամբ ընթրել. զարմանալի բան, Ճ՛ենարո, կամ տղայ եղիր և կամ մարդ. կամ ստնտուին ծոցը դնա և կամ եկու հետս ընթրելու։

Ճ՛Ն. Ստուգիւ խենդութիւն է գի-

շեր ժամանակ այսպէս փախչելը. վախկոտ մարդու գործ է ըրածս. մանաւանդ որ եթէ հնալու վտանգ կայ, պէտք չեմ Մաֆիոն մինակ թողուլ։ Ի՛նչ որ կ'ուզէ՝ թող ըլլայ. Ճակատագիրը ինչ որ է՝ այն պիտի կատարուի. հետդ կու գամ միայն թէ դուն Նէկրօնի իշխանուհւոյն ներկայացուր զիս։

Մաֆ. ան՝որ յե՞ռչը բռնելով. Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, ահա՛ բարեկամ մը։

Կը մնին. ու Տօն Ալֆոնս և Բոսթիլեա էրեն պառուած պէղէն դուրս ելան։

Ռուս. սո՞ւրը բացած. Ի՞նչ կ'ըսպասենք, տէր իմ. երկու հոգի են, գուք ձեր մարդին վրայ ինկէք, ու ես միւսին վրայ։

Տօն Աչ. Ո՛չ, Ռուսթիչէլը. Նէկրօնի իշխանուհւոյն տունը ընթրելու կ'երթան. լսածս..... (խօսքը կ'ընդմիջէ և չէլ մը մտածելէն ետք՝ բարձրաձայն կը ծիծաղի). — Ի՞նչ կը կարծես, այս կերպով աւելի աղէկ ուզածնիս պիտի կատարուի. Ճշմարիտ այս ծաղրալից արկած մը պիտի ըլլայ։ Սպասենք մինչև վաղը։

Պուտուտ կը մնին։

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԳԱՐԴ

ՄԱՀ - ԱՐԲԵԱԼԻՔ

Նէկրօնի դպրոցին շրջեց սրտի մը. ոչ կոցմը գացողի դուռ մը. ներսը երկու փեցկերոջ մեծ եւ խիստ ցայն դուռ մը. մէջ տեղը՝ հիգեւասանեռորդ դարուն ձեւոջը փառաւոր սեղան մը շինուած. ոսկեկուռ դիմակ հագած սեւ փոքրիկ մանկաւիկները անոր բոչոսթիքը կը դասնան։ — Վարագոյրը բացուած ատենը տասն եւ շորս կոչնականներ սեղանին բոչոսթիքը նստած են, որք են Ժէփօ. Մաֆիոն. Ռաքանիս. Օշօֆիրիս. Ռիսոթիսչօ. Ճինարս. եւ կուդէթիա, եօթը երիտասարդ գեղեցիկ ուխտ ցայեշուշ հագուած ցարդարուած կիներ։ Ամենքն աչ կ'ուտեն եւ կը խմեն, ամենքն աչ իրենց մօտինին հետ բարձրաձայն կը ծիծաղին, բաց՝ ի Ճինարօյին, որ չուիկ եւ մտախոհ կ'երեւի։

Տեսարան Առաջին

ԺԷՓՕ. ՄԱՖԻՕ. ԱՍՓԱՆԻՕ. ՕԼՕՃԼԷՐՆՕՕ. ՏՕՆ ԱՖՕՍԹՕԼՕ. ԿՈՒԿՈՒԼԻԱ. ՃԻՆԱՐՕ. ԿԻՆԵՐ. ՄԱՆԿԱՒԱՒԻԿՆԵՐ.

Օչօ. Բաժակը յե՞ռչը ասա՞ծ. Կեցցէ Վսէրէսի զինին, Վսէրէս արքայութեան մէկ քաղաքն է։

Մաֆ. Բաժակը բռնա՞ծ. Ժէփօ, խմած զինինիս մեզի պատմած պատմութիւններդ շատ պատուական է։

Աս. Ժէփօն խմած ատենը պատմութիւն պատմելու մոլութիւնն ունի։

Տօն Աֆօս. Անցեալ օր Վենետիկ Պարպարիկօ մեծապատիւ դուքսին տունն էինք, այսօր Ֆէրարայ՝ Նէկրօնի չքնաղ իշխանուհւոյն տունն ենք։

Ժէ. Անցեալ օրուան պատմութիւնը տրտմալի էր, բայց այսօրուանը ուրախալի է.

Մաֆ. Ուրախալի՞ պատմութիւն է, Ժէփօ, երբ Տօն Սիլիսէօ երեսուն տարեկան գեղեցիկ ասպետը իւր հայրենական ժառանգութիւնը թուղթ խաղալով կորսնցնելով, խիստ հարուստ բայց քառասուն և ութը տարեկան Վալիւրնիա մարքիզուհւոյն հետ ամուսնացեր է, ա՞ս է ուրախալի ըսածդ։

Կուդ. Այդ տրտմալի և հասարակ

ան մի է. ինչաւեր մարդ մը կենաւեր կնոջ մը հետ ամուսնացեր է, որն որ ամեն օր կը պատահի։

Կ՚ուզէի ասել. ժամանակ առ ժամանակ ոմանք ինչանին ինեւեն և իւր գան պեռարանին առջեւը իւ լոսին։

ՆԵԿ ԻՀ. Մաֆիոյին ղՃՆԵՆարօն ցոյցնելով. Պ. Օրսինի կոմս, բարեկամդ խիստ արտուստ կ՚երևի։

Մաֆ. Միշտ այսպէս է, տիկին. ներեցէք ինձ որ առանց ձեր հրաւիրմանը զան հոս բերի։ Ան իմ զինակից եղբայրս է. Իմիմնիի յարձակման ժամանակ իմ կեանքս ազատեց, վ՚ի չէնցիոսի կամուրջին յարձակման առեանն ալ ես սուրի հարուած մը ընկալայ, որ անոր ուղղուած էր։ Ամենևին իրարմէ չենք զատուիր, այլ միշտ մէկտեղ կ՚ապրինք։ Բոհեմիացի մը զուշակեց մեզ թէ երկուքնիս ալ ՃԿ օրուան մէջ պիտի մեռնինք։

ՆԵԿ. ծիծաղելով. Ի՞նչ ժամանակ պիտի ըլլայ ըսաւ, առատ թէ իրիկուն։

Մաֆ. Առտու։

ՆԵԿ. ա-ելք բարձր ծիծաղելով. Բոհեմիացին ըսածը չզիտեր. շատ կը սխեն այդ մարդը։

Մաֆ. Այո՛։

ՆԵԿ. Շատ երջանիկ էք ուրեմն, որ այդպէս իրարու բարեկամ էք։

Մաֆ. Բարեկամութիւնը բոլոր սիրտը չլեցներ, տիկին։

ՆԵԿ. Հապա ինչ բան կը լեցնէ։

Մա. Սէրը։

ՆԵԿ. Սէրը միշտ բերանդ է։

Մա. Այո ձեր աչքերուն մէջն է։

ՆԵԿ. Շատ զարմանալի մարդ մ՚էք։

Մա. Այո դուք շատ գեղեցիկ կին մ՚էք։

Ամոր ՄԷՋԷՆ ԻԷ ԲԱՆԷ։

ՆԵԿ. Պարոն Օրսինի կոմս, կ՚աղաչեմ թող զիս։

Մա. Համբոյր մը կ՚ուզեմ ձեռացրդ վրայէն։

ՆԵԿ. Ո՛չ։

ԿԷ ՀԱԽԷՒ ԱՆՈՐ ԽՈՎԷՆ։

Կուզ. Մաֆիոյին խովը երբեսլով. Կը նայիմ որ գործդ յաջողցուցիր իշխանուհւոյն հետ։

Մա. Միշտ ո՞չ կ՚ըսէ։

Կուզ. Կնոջ մը բերնին մէջ՝ ո՞չը միշտ այտին անդրանիկ եղբայրն է։

Ժէֆիս, ձայն գալով, Մաֆիոյին. Ներկրօնի տիկինը ինչպէս դտար։

Մա. Ընդնման է. խօսքը մէջերնիս մնայ. սիրտս չափազանց իրեն կը գըրաւէ։

Ժէֆիս. Հապա իր ընթրիքը ինչպէս է։

Մա. Այքանչելի։

Ժէֆիս. Իշխանուհին այրի է։

Մա. Իւր զուարթութենէ յայտնի կ՚երևի։

Ժէֆիս. Կը յուսամ որ անոր ընթրիքը պիտի ախորժես այսուհետև։

Մա. Ճշմարիտ խենդ էի ես։

Ժէ. Կ՚ուզենայիր. Պարոն Պէլվէրանա. կը հաւատաս որ Մաֆիս իշխանուհւոյն տունը ընթրելու կը վախնար։

Կուզ. Ինչո՞ւ համար պիտի վախնայ։

Ժէ. Վասն զի Ներկրօնիի պալատը ՊօրՃիայի պալատին պատկից է։

Կուզ. Գեռինը անցնին այդ ՊօրՃիաները. լեցուցէք բաժակները խըմենք։

Ժէ. Կամայ մը Մ-ֆիոյին. Պէլվէ-

բանայի աս բանը կ'ախորժեմ որ Պօր-
ճիանները չսիրեր։

Մաֆ. Լամաց մը. Ստուգիւ միշտ կ'ա-
ռէ զանոնք, բայց սիրելի Ժէպիօ...։

Ժէ. Ի՞նչ ըսել կ'ուզես։

Մաֆ. Ընթրիքին սկիզբէն 'ի վեր
կը նայիմ որ աս կեղծ Սպանիացին ջու-
րէն զատ ուրիշ բան չխմեց։

Ժէ. Ահա դարձեալ կասկածները
պաշարեցին զքեզ, սիրելի Մաֆիօ։

Մաֆ. Կարելի է իրաւունք ունիս,
և ես սխալ կը կարծեմ։

Կուդ. Մ-ֆիօյին գլ-խէն մի՛ լ-
ռերը տիրելով. Պարոն Մաֆիօ, ստու-
գիւ ինչսուն տարի ապրելու կազմու-
թիւն մը ունիս և իմ հաւիս կը նըմա-
նիս, որ ինչսուն տարի ապրեցաւ, և
անոր անունն էր խիստիս պէս. "Ժիլ
— Պալիլի — Ֆէրնան — Իրէնէօ — Ֆի-
լիպ — Ֆրասքօ — Ֆրասկուիթ, Պէլվէ-
բանա կոմս"։

Ժէ. Լամաց մը Մ-ֆիօյին. Կը յու-
սամ որ անոր Սպանիական հանգա-
մանքներ ունենալուն վրայօք ալ տա-
բակոյս չունիս. առ նուազն քսան մը
կըրաուիթեան անուն ունի։ — Պարոն
Պէլվէբանա, այս ինչ տիտղոսներ են։

Կուդ. Ափսո՛ս, մեր ծնողքը սովո-
րութիւն ունին մեր ամուսնութեան ժա-
մանակ մեզ տուած ստակէն աւելի մկըր-
տութեան տեղն անուններ կու տան։
Բայց ինչո՞ւ կը ծիծաղին հոն։ (Ինչ-
դիրեն)։ — Ա՛յսու ամենայնիւ կիները
ասկէ մեկնելու համար պատճառ մը ու-
նենալ պէտք են. ինչպէս ընենք ու-
բեմն։

Կը դառնայ նորէն Էլվիրը։

Օլ. Խելով. Ճշմարիտ, պարոն-
ներ, այսպիսի մէկ զուարճալի գիշերն
մը անցուցած չէի։ Տիկիններ, սա գի-
նիէն քիչ մը խմեցէք. Լաքրիմա-
Քրիսթիի գինիէն աւելի քաղցր, և
Կիպրոսի գինիէն աշխոյժ է. Միրա-
կուլայի գինի է, պարոններ։

Կուդ. Ո-ՎԷԼ. Կ'երևի թէ Օլ-
ֆէրնօ արբած է։

Օլ. Տիկիններ, ձեզի նոր երգ մը
երգեմ, այսպիսի մէկ սքանչելի խնջոյք
մը գովաբանելու համար աւելի մեծ
բանաստեղծ մը ըլլալ կ'ուզէի։

Կուդ. Նս ալ աւելի հարստութիւն
ունենալ կ'ուզէի, որմէ իմ բարեկա-
մացս ալ տայի։

Օլ. Գեղեցիկ կնոջ մը և պատ-
ուական հացկերոյթի մը վրայօք երգե-
լէն աւելի քաղցր բան չկայ։

Կուդ. Քանզի մէկը գրկելու և մի-
սը ուտելու համար է։

Օլ. Ա՛յո՛, կ'ուզէի բանաստեղծ
մը ըլլալ. կ'ուզէի երկինքը վերամ-
բառնալ, ու երկու թև ունենալ...։

Կուդ. Փասեան բերէք ինձ։

Օլ. Նս ձեզ իմ տաղերգութիւ-
նըս երգեմ։

Կուդ. Ստուգիւ, պարոն Օլֆէր-
նօ Վիթելոզ մարքէզ, ես պիտի չի-
թողում որ զան երգես, ու թող մեզ
որ խմենք։

Օլ. Պիտի չթողո՞ւս որ տաղեր-
գութիւնս երգեմ։

Կուդ. Ա՛յո՛, ինչպէս որ պիտի չի-
թողում շանց որ զիս խածնեն, Պա-
պին՝ որ զիս օրհնէ, և անցնողներուն՝
որ ինձ քար նետեն։

Օլ. Պարոն Սպանիացի, զիս նա-
խատել կ'ուզես կարծեմ։

Կուդ. Ես զքեզ չեմ նախատեր, ով Իտալիոյ մեծ արձան։ Այլ տաղերգութիւնդ մոռիկ ընել չեմ ուզեր, և ոչ ուրիշ բան. կոկորդս աւելի ծարաւ ունի Կիպրոսի գինի խմելու, քան թէ ականջներս բանաստեղծութիւն մռիկ ընելու։

Օլօ. Ականջներդ, հինօրեայ Վասթիլան, զարշապարներուդ պիտի բերեմ։

Կուդ. Ո՛հ, անճոռնի դատարկասուն. այսպիսի զուեհիկ մէկը տեսնըլսած է երբէք, որ Սիրակուզայի գինիէ գինովեայ, ու դարեջուրէ արբածի պէս երևի։

Օլօ. Ճշմարիտ, հիմա քեզի չորս կատոր կ'ընեմ։

Կուդ. Քանէանը խրելով. Ես այդչափ մեծ չեմ խօսիր, քեզի չափ մեծ հաւեր չեմ մանրեր։ — Տիկիններ, աս փասեանէն կը հրամայէք։

Օլօ. Դանակ մը յափշտակելով. Սա ստահակին աղիքը դուրս պիտի թափեմ, թէ և կայսրէն ալ աւելի աղնուական մէկը ըլլայ։

Կիներց, սէղանէն իջնելով. Տէր Աստուած, հիմա պիտի զարնուին։

Արդիկները. Հանգիստ նստիր, Օլօֆէրնօ։

Օրիերօյի յետոյէն դանակը առնելու-վազելու կիները անբնոյի ի՛ւլան խրմնալի դանակէն։

Օլօ. անոնց հէս վնասելով. Լիրբ ես։

Կուդ. Այնչափ ըրիր, որ տիկինները փախուցիր, ինչ զոռոզ յիմար ես եղեր։

Ժէ. Շխտակ է, ուր զացին արդեօք։

Պապ. Վախցան անոնք, քանզի կանայք դանակ տեսնելնուն պէս կը փախչին։

Աս. Հոգ մ'ընէք, հիմա ետ կը դառնան։

Օլօ, Կոպիրոյին սպառնալով. Վաղը ես զքեզ կը դտնեմ, պարոն Պէլվէրանա։

Կուդ. Վաղը ինչ կ'ուզես ըրէ։ (Օլօֆէրնօ երերալով բարի-ռիեամբ իր տեղը կը դառնայ։ Կոպիրա բարյրայայն կը ծիծաղի)։ Ես ինչ ապուշ մարդ է, որ դանակով մը ֆիէրարի ամենէն զեղեցիկ կիները փախցընէ։ և տաղերգութեան մը համար նեղանայ։ Ստոյգ է անոր թև ունենալը. քանզի ան մարդ չէ, այլ սագի ձագ։ Այո՛, անիկա պիտի թարի և պիտի քնանայ իր մէկ թաթին վրայ, խե՛ղճ Օլօֆէրնօ։

Ժէ. Ա՛զէ, հաշտուեցէ՛ք, պարոններ, և եթէ կ'ուզէք՝ վաղը իրարու գլուխ կտրեցէք գոնէ աղնուականաբար սուրերով և ոչ այդպէս դանակներով։

Ան. Սուր ըսիր, միաքս եկաւ. ինչ ըրինք սուրերնիս։

Տօն Ֆիօս. Պոցաքը որ նախասենեակին մէջ վրանէս առին զանոնք։

Կուդ. Ես նախազգուշութիւնը խոհեմութեամբ ըրեր են, եթէ ոչ՝ տիկնանց առջև իրարու հետ պիտի կռուէինք. և ամօթապարտ պիտի մնայինք։

Ն՝ե. Այո՛, խոհեմ զգուշութիւն ըրեր են։

Պա. Օրհնեալ ըլլայ Աստուած, եղբայր Ն՝ենարօ, ընթրիքին սկիզբէն 'ի վեր առաջին անգամն է որ բերանդ կը բանաս, և ամենևին չես խմեր։ Ար-

գեօք Լուքրէցիա Պօրճիայիդ կը մը-
տածեա, Ալէնարօ. ստուգիւ անոր
սիրահարած կը տեսնեմ զքեզ, կրնամ
չէ ըսել։

Ա՛հ. Լեցուր որ խմեմ, Մաֆիօ.
զինակից եղբարցս պէս սեղանակիցնե-
րըս ալ սիրել պէտք եմ։

Սեւ. մանկաւարիկ մը, յեռ-ոը երկո-
պրոտակ բռնած. Պարոններ, Կիպրո-
սի գինի կ'ուզէք թէ Սիրակուզայի։

Մա. Սիրակուզայի գինին աւելի
ընտիր է։

Սև. մանկաւարիկը բոլոր գաւաններուն կը սեղմէ։

Ժ. Ընտիրեալ Օլօֆերնօ։ Ար-
գեօք այս տիկիններուն նորէն ետ պի-
տի չդառնամ։ (Փոքրիկի երկո-դո-
ռերը կ'երթայ)։ Դուռերը դուրսէն
գոցեր են, պարոններ։

Մա. Ի՞նչ կը վախնաս դուն ալ,
Ժէփօ. եռանդն չերթալնուս համար
ըրած են, ատ ալ մտածելու բան է։

Ա՛հ. Խմենք, պարոններ։

Գաւաններուն իրարու կը զարնեն։

Մա. Կենացդ, Ալէնարօ. Ստու-
ծով քիչ ժամանակէն մայրդ գտնես։

Ա՛հ. Աստուած լսէ ձայնդ։

Ամենը կը խմեն. Կառաքիայեն զատ. որ իր
ոտին վրայեն գինին կը թափէ։

Մա. Կամայ մը Ժէֆիոյին. Ա՛շմա-
բիտ, Ժէփօ, հիմա աչքովս տեսայ։

Ժէփօ, կամայ մը. Ի՞նչ բան։

Մա. Սպանիացին գինին չխմեց։

Ժէփօ. Հապա ինչ ըրաւ։

Մա. Ուսին վրայէն գետինը թափեց։

Ժէփօ. Ան ալ դուն ալ արբեալ էք։

Մա. Կարելի է։

Կուդ. Պարոններ, խմելու երգ մը
պիտի երգեմ. ան մարքէզ Օլօֆեր-
նօյի տաղերգութենէ ընտիր է։ Բայց
ես կ'երգնում իմ հօրս ծեր դանկին
վրայ որ այս երգը ես չերգի, քանզի
պէտք չեմ, և ոչ իսկ խելքս այնչափ
յարմարութիւն ունի խօսքի մը երկու
յանգերը իրարու կցել ատ։ Իմ
երգս պարոն Ս. Պեարոսին ուղղուած
է, որ արքայութեան հոչակաւոր դրո-
նապանն է, և անոր նուրբ գիտողու-
թիւնը ատ է թէ՝ բարի Աստուծոյ եր-
կինքը արբեցողներուն կը վերաբերի։

Ժէփօ, կամայ մը Մաֆիօյին. Գի-
նին աղէկ գործ տեսեր է, ըսածը չի-
գիտեր։

Ամենքնին, Ա՛ղնարօյէ զատ. Երգէ
ուրեմն։

Կուդէթա. երգելով.

Ո՛վ սուրբ Պեարոս. բաց երկինքին
դուռ դրուներդ այն արքային,
Որ իւր ձայնը բարձրացուցած՝
կ'երգէ սիրով ըղձեր Աստուած։

Ամենքնին, դիտելով Ա՛ղնարօյէ զատ.
Փառք քեզ Տէր։

Gloria Domino!

Բաղձոյցն ծիծաղներով գաւանները իրարու
կը զարնեն։ Յանկարծ հեռուեն պրպտալի
եղանակ երգի մը ձայնը կը լսուի։

Ձայն, դրսեն. "Սուրբ և ահար-
կու է անուն քո։ Սկիզբն իմաստու-
թեան երկիւղ Տեառն"։

« Sanctum et terribile nomen ejus.
Initium sapientiæ timor Domini ».

Ժէփօ, աւելի պրպտոց ծիծաղելով.
Մտիկ ըրէք, պարոններ. մեր գինիի
երգը երգելու ատեն, արձագանքը
երեկոյեան աղօթքը կ'երգէ։

Ամենքնին. Մտիկ ընենք։

Զայն, դրսէն, փէշ մը ասելի մօտեցած. "Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն ոքնին պահապանք նորա"։

« Nisi Dominus custodierit civitatem, frustra vigilat qui custodit eam».

Ամենուն ալ փոքրիկ ձեռնեան։

Ժէպհ. Եկեղեցական պարզ երգ մ'է։

Մա. Կարելի է թափօր մը կ'անցընեն։

Ն'է. Գրեթէ կէս գիշեր է, այս ժամուս թափօր կ'անցնի։

Ժէպ. Ի՞նչ շուարեր էք, շարունակէ, պարոն Պէլլէրանա։

Զայն, դրսէն, փէշ փէշ ասելի մօտենալով. "Աչս ունին՝ և ոչ տեսանեն։ Ունչս ունին՝ և ոչ հոտոտին։ Ականջս ունին՝ և ոչ լսեն"։

« Oculos habent, et non videbunt. Nares habent, et non odorabunt. Aures habent, et non audient. »

Ամենուն ալ ասելի բարբրոյն ձիծաղին։

Ժէպ. Արդեօք այս կրօնաւորները ցնորեր են։

Մա. Հոն նայէ Ն'էնարօ, ճրագները կ'անցնին և ահա մութը մնացինք։

Ճրագներուն լոյսը իջաւ ձեռքերուն։ Եղերնին հոգեվի պէս։

Զայն, դրսէն, ասելի մօտ. "Ձեռս ունին՝ և ոչ շօշափեն։ Ոտս ունին՝ և ոչ գնան. և ոչ զոյ բարբառ 'ի կոկորդս նոցա։

« Manus habent, et non palpabunt. Pedes habent, et non ambulabunt. Non clamabunt in gutture suo.»

Ն'է. Կարծես թէ ձայնները կը մօտենան։

Ժէպ. Թափօրը գիս աս միջոցին մեր պատուհաններուն տակը կ'երևակայեցընէ։

Մա. Յուղարկաւորութեան արարողութիւն մի է։

Ա. Մէկը մեռած պիտի ըլլայ։

Ժէ. Ուրեմն հանդուցեալին կենացը համար խմենք։

Կուդ. Բայց գիտէք քանի՞ հոգի են մեռնողները։

Ժէ. Ուրեմն ամեն մեռնողներուն կենացը։

Ափօս. Կ'ապէրնայէն. Կեցցէս. շարունակենք մենք ալ առ սուրբն Պետրոս ըրած պաղատանքնիս։

Կուդ. Ինչո՞ւ աւելի քաղաքավարութեամբ չես խօսիր. պէտք ես այսպէս ըսել, Ա՛ռ Պարոն սուրբն Պետրոս, արքայութեան պատուաւոր նուիրակ և հրովարտակաւոր բանտապան։ (Կ'երգէ)։

Ո՛վ սուրբ Պետրոս, բաց երկինքին
Դուռ դրուներդ այն արքոյին,
Որ իւր ձայնը բարձրացուցած՝
Կ'երգէ սիրով ըղձիր Աստուած

Ամենքին.

Փառք քեզ Տէր։
Gloria Domino!

Կուդէնա.

Բաց դրուներդ այն արքոյին,
Որ խենդ երգօք կլէ զինին.
Իւր որովայնն այնչափ պարարտ՝
Զգիտեմ ինչ է, տակառ թէ մարդ։

Ամենքին, փրփրաջիյն ձիծաղներով գոռալենիրը իրարու զարնելով.

Փառք քեզ Տէր։
Gloria Domino!

Ներսէն խումբ մեծ գոռալ լսուելեամբ մը իջարձակեալ էր բարտուտ. ու գոռալը անորոշ պատուած ընդարձակ սրահ մը ի ներսի. ուրեան ներսէն խումբ մանի մը ազատանիներ և արձանիներ մեծ խաչ մը դրեր էին։

Սպիտակաւանգեայ և սնուանգեայ իրօնաւորայ բաղմութիւն մը, որոյ միայն աչքերին իր պեռնուելիս, յեռաբերանին ջահ բռնած խարբա մէջ գուռին ներս իր մտնին բարձր և պարուելոյ յայնուհ երգելով։

“Ի խորոց անդնդոց առ քեզ կարդացի, ովՏէր”։

«De profundis clamavi ad te, Domine!

Աւելի էսոնա լռութիւնամբ սրահին երիս խղմը իր ղարուին, ու արշանի պես անդարձ իր ելնան, և երիտասարդ ալնուանիները ապրութիւնամբ անուց իր նային։

Մա. Ինչ կը նշանակէ աս։

Ժէ. Ծիծաղելով. Աս կատակ մը պիտի ըլլայ։ Այս դրաւ կը գնեմ որ ասոնք մեր գեղեցիկ կոմսուհիներն են, որոնք զմեզ փորձելու համար այսպէս ծպտեր են. եթէ ասոնց մէկուն ծածկոցը վերցնելու ըլլանք, գեղեցիկ կնոջ մը առոյգ և չար կերպարանքը պիտի տեսնենք։ — Նայեցէք հիմա։

Կներիս ծիծաղելով իրօնաւորայ մէկուն իր-փռուշը իր վերցնէ, և պաղած իր մնայ իրօնաւորի մը երեսը պեռնելով, որ անդարձ իր-տեր եր ջահը յեռաբերանը և ալեսը խոնջած։ Կնփռուշը յեռաբերանի իր ելաւ և էլ իր տարուի։

Զարմանալի դիպուածի մը կը դառնայ գործը։

Մա. Զեմ դիտեր ինչո՞ւ արիւնս երակներուս մէջ կը պաղի։

Կրօնաւորները. Բարձր յայնի— երգելով. “Խորտակեսցէ զղլուխս բազմայ յերկիր”։

« Conquassabit capita in terra multorum.»

Ժէ. Այս ինչ սոսկալի թակարթ է, պարոններ. ուր են սուրերնիս, թող բերեն մեր սուրերը։ արդեօք սատանայի՞ տուն է այս։

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՆՈՅՆԵՐԸ. ՏՕՆԱ. ԼՈՒՔՐԼԻՑԻԱ.

Տօնա Լուր. Սեր հագած յանկարծ դրան սիմին վրայ երևելով. Իմ տանս մէջն էք։

Ամենքին. Բայց՝ ի Ճէնարոյին, որ Բապրոնին մէկ անկիւնը կիցած ամեն բան կը դիտէ, և Տօնա Լուքրէցիա ման ելեսներ։ — Լուքրէցիա Պօրճիան է։

Տօնա Լուր. Քանի մը օր առաջ ամենքնիդ ալ նոյն որչափ հոգի որ հոս էք, իմ անունս յաղթութեամբ մը կ'արտասանէիք, բայց հիմա այսօր երկիւղով կ'արտասանէք։ Այո՛, երկիւղալից աչօք նայեցէք ինձ։ Այս նոյն ինքն եմ, պարոններ. կ'իմացընեմ ձեզ որ ամենդդ ալ թունաւորուած էք, պարոններ. և ձեզմէ մէկը և ոչ մէկ ժամ պիտի կարենայ ապրիլ։ Տեղերնեդ մի շարժիք։ Քովերնուս սրահը զինուորներով լեցուն է։ Կարդը իմն է հիմա, ես ձեզի հետ բարձր պիտի խօսիմ ու ձեր դլուխը պիտի ջախջախեմ։ Ժէֆրօ Լիվերէթօ, դնա քու Վիթէլի անուն հօրեղբօրդ քովը, որ ընդ որ Վադիկանի մատանիներուն մէջ դաշոյնով սպաննել տուի ես։ Ասքանիո Փէթրուքքի, դնա Փանթէլֆօ քու հօրեղբօր որդիդ փնտռելու, զոր ես սպաննել տուի անոր քաղաքը յափշտակելու համար։ Օլֆէրնօ Վիթէլոզզ, քու Նակօ Ասիանի հօրեղբայրդ ալ քեզ կ'սպասէ. զոր ես տօնախմբութեան մը մէջ թունաւորեցի։ Մաֆիօ Օրսինի, դնա միւս աշխարհը ինծի համար Կրավինա եղբօրդ խօսէ, զոր ես իւր քունին մէջ խեղդել տուի։ Ասիսթիոլ Կաղէլլա, ես քու Ֆրան-

չէսքօ Կապէլլա եղբայրդ Ալֆօնս տ՝ Բրակօն հօրեղբօր որդիդ սպաննել տուի, այնպէս չէ. դնա գուն ալ ա-նոնց քով։ — Դուք ինձ պարահանդէս մը տուիք Վենետիկ, ես ալ ձեզ ա-նոր փոխարէն ընթրիք մը տուի Ֆէ-բար։ Տօնախմբութիւն տօնախմբու-թեան տեղ, պարոններ։

Ժէ. Այս ինչ խիստ երաշ մ՝է, Սաֆիս։

Սա. Աստուծոյ մտածենք։

Տ. Լուք. Անշուշտ աս դիպուածին չէիք սպասեր, ո՛վ վերջին բարե-կենդանի երիտասարդ բարեկամներ։ Այհա ես իմ վրէժս կը լուծեմ ձեզմէ. ասոր ինչ կ՝ըսէք, պարոններ. այս վրէժխնդրութեանս խօսք չիկայ, կար-ծեմ։ — Լսէք նայիմ, կնոջ մը վրայ ինչ կը մտածէիք։ (Կրօնաւորներուն)։ — Հարք իմ, աս պարոններուն մերձա-կայ պատրաստուած սենեակը տարէք, հոն խոստովանցուցէք զանոնք, և ա-նոնց մնացած քիչ մը ժամանակին մէջ անոնց հոգին աղատելու աշխատեցէք։ — Պարոններ, անհոգ եղէք, ձեր հոգին բարի ձեռաց մէջ պիտի աւան-դուին։ Այս արժանաւոր հայրերը Ս. Սիքսթոսի կանոնաւոր կրօնաւոր-ներէն են, որոնց այսպիսի պարագա-ներու մէջ ընկերանալու հրաման տը-ւած է ինձ մեր Պապ հայրերնիս։ — Ինչպէս ձեր հոգւոյ նոյնպէս ձեր մարմնոյ ալ հոգ տարի։ Այհա տե-սէք։ (Կրօնաւորաց, որոնք ներքին դռ-ռէն ատ-ջը կանգնած էին)։ — Աս դի կողմը անցէք, հարք իմ, որ աս պա-րոնները տեսնեն։ (Կրօնաւորները մէկ դէմ կը ելլեն, և դրան առ-ջեւ դռ-ռած կ՝երթան սե-ղանոյ ծա-ղոռած հինգ դագաղներ)։ Ահիւդ հինգ հատ է ձեզի համար պատրաստուած։ — Ո՛վ երիտասարդ պարոններ, թը-շուառ կնոջ մը աղիքը գալարած ա-տեննիդ չմտածեցիք որ ան ձեզմէ վը-ըէժը պիտի լուծէ։ — Այհա քուկդ, Ժէֆիս. Սաֆիս, այհա քուկդ ալ, և այհա ձերն ալ, Օլոֆերնս, Ալֆոս-թոլս, Ասքանիս։

Ամ. Ը՞ր Լ-ոչնեցիա մինչեւ աս մը-ջոցին չէր պեսեր, ոյլ մը յաոաջանա-ըլ. Վեցերորդ մը պէտք է, տիկին։

Տօնա Լուք. Ո՛վ Աստուած, Ամ-նարօն է։

Ամ. Այո՛, ես ինքս եմ։

Տօնա Լուք. Ամենքդ ալ դուրս ե-լէք, ու զմեզ միանակ թողուցէք։ Կու-պէթա, հոս ինչ որ կ՝ուզէ ըլլայ, նայէ՛ որ ներս մարդ չմտնէ։

Կուպ. Հատ աղէկ։

Կրօնաւորները խարտա դուրս ելլելեն, իրենց հետը տանելով երերացող և ինքզինքին նորոնցուցած հինգ պարոնները։

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՁԻՆԱՐՕ. ՏՕՆԱ ԼՈՒՔՐԻՑԻԱ.

Սենեակին մէջ հացիւ քանի մը շուսամեռ ճրագներ կան։ Դռները ցերասին կը գոցուին. Տօնա Լուքրեցիա եւ Ճինարօ միմեանց մնաչոյ, ժամանակ մը շուտիեամբ իրարու կը նային, խօսքերնին ինչպէս սկսեշնին չգիտնալով։

Տ. Լուք. Ինչ-ինչերն խօսելիք Ամ-նարօն է։

Կրօնաւորաց երգը, դրսէն. "Եթէ ոչ շինէ Տէր զքաղաք, 'ի նանիր վաս-տակին շինողք"։

"Nisi Dominus ædificaverit domum, in vanum laborant qui ædificant eam.

Տ. Լուբ. Դարձեալ դուն, Ն՛ենարօ. ամեն հարուածոցս տակը միշտ պիտի դանուիս դուն։ Ի՞նչպէս անոնց հետ դտնուեցար։

Ն՛. Աս ամենուն վրայ կը տարակուսէի, տիկին։

Տ. Լուբ. Դարձեալ թունաւորուեցար, Ն՛ենարօ. պիտի մեռնիս։

Ն՛. Թէ որ ուզեմ՝ անդեղայն ունիմ։

Տ. Լուբ. Ո՛հ, այո՛, օրհնեալ ԸԼԼայ Աստուած։

Ն՛. Մէկ խօսք ունիմ քեզի, տիկին. աս գործերուն մէջ դուն փորձաւոր ես, աս սրուակին մէջ բաւական հեղուկ կայ այն պարոնները աղատելու համար, զորոնք կրօնաւորները 'ի դերեզման կը տանին։

Տ. Լուբ. Սրո՞ւակը ԵՒՊԵԼԼ. Հաղիւ քեզի բաւական է, Ն՛ենարօ։

Ն՛. Հիմա խակայն չե՞ս կրնար ուրիշ ալ դտնալ։

Տ. Լուբ. Ունեցածս քեզ տուի։

Ն՛. Շատ աղէկ։

Տ. Լուբ. Բայց ինչո՞ւ ես կեցեր, Ն՛ենարօ. շուտ ըրէ։ Ա՛յսպիսի սոսկալի պարագաներու հետ խաղալու չի՛դար։ Ընդեղան որչափ շուտ առնուի՝ դարձեալ ուշ է։ Խմէ՛ ուրեմն, յանուն Աստուծոյ, անխոհեմութիւնը մէկ դի ձդէ, ու կեանքդ աղատէ։ Գաղտնի դոնէ մը ղքեզ պալատէն դուրս կը հանեմ. ու ամեն չարեաց առաջը կ'առնունք։ Գիշեր է. քեզի համար խակայն ձիեր թամբել կուտամ. ու վաղը առտու Ֆէրարէն հեռացած պիտի ըլլաս։ Հոս այնպիսի գործեր կ'ըլլան որ ղքեզ կը սոսկացընեն, այնպէս չէ՞։ Խմէ՛ ուրեմն, ու երթանք։ Պէտք է որ ապրիս, ու ասկէ աղատիս։

Ն՛. Սեղանին վրայէն դանակ մը տանել։ Պէտք է որ մեռնիս, տիկին։

Տ. Լուբ. Ի՞նչ կ'ըսես։

Ն՛. Ա՛յո՛, ինչպէս որ դուն նենդութեամբ իմ հինգ աղնուական բարեկամներս թունաւորեցիր, որոնց մէջ է նաև Մաֆիօ Օրսինի ղինակից եղբայրս, որ Վ՚ինէնցիոսի կամուրջին վրայ իմ կեանքս աղատեց, և որուն եղած անիրաւութիւնը և վրէժխնդրութիւնը ինձ է, նոյնպէս դուն ալ պէտք ես մեռնիլ, ու ես այս անօրէնութեանդ համար Մաֆիօյի և միւս բարեկամներուս վրէժը պիտի լուծեմ։

Տ. Լուբ. Ո՛վ երկինք ու երկիր, դուք օգնութեան հասէք։

Ն՛. Աղօթքդ ըրէ, բայց կարճ ըլլայ, տիկին. ես թունաւորուած եմ, և սպասելու ատեն չունիմ։

Տ. Լուբ. Ո՛հ, անկարելի է, ինչ, Ն՛ենարօն ղիս սպանանէ։

Ն՛. Ստոյգ իրողութիւն է, տիկին. ժամանակ մ'ա՛նցըներ. ըսիկ, միացեալ ձեռօք և ծնկան վրայ աղօթք ըրէ Աստուծոյ. ահա՛ քեզ աթոռ մը որ ատ բանին յարմար է։

Տ. Լուբ. Ո՛չ, անկարելի է կ'ըսեմ։ Նրբէք մտացս մէջ ունեցած սոսկալի խորհրդոցս մէջ այսպիսի խորհուրդ մը եկած չէ։ — Ի՞նչ, ինչ, դանակը կը վերցընես որ զարնես ղիս, կեցիր, Ն՛ենարօ, խօսք մը ունիմ քեզ ըսելու։

Ն՛. Շո՛ւտ ըսէ։

Տ. Լուբ. Դանակը նետէ՛ ձեռքէդ, խեղճ մարդ, նետէ՛ կ'ըսեմ։ Եթէ դիտնայիր, Ն՛ենարօ, թէ դու ո՞վ ես, եթէ դիտնայիր թէ ես ո՞վ եմ. անշուշտ չես դիտեր թէ ո՞րչափ մօտ ենք իրարու. յայտնի ըսե՛մ ամեն բան ա-

նոր։ Մի և նոյն արիւնը, Ճէնարօ, մերերակներուն մէջ կը քալէ։ Քու հայրդ Կանտիայի դուքս Յովհաննէս Պօրճիան է։

Ճ՝. Քու եղբայրդ, և դուն իմ հօրաքոյրս ես, ո՛հ, տիկին։

Տ. Լուք. Ինդիրէն. Իր հօրաքոյրը։

Ճ՝. Ի՞նչ, ես քու քեռորդի՞դ եմ, Ո՛հ, բոլոր Պօրճիաները Կանտիայի դքսուհի իմ խեղճ մայրս այնպէս թշուառացուցին։ Տիկին Լուքրէցիա, մայրս իր նամակացը մէջ քու վրայօքդ կը խօսի. դուն ալ այն անողորմ ազգականաց թուոյն մէջն ես, որոնց վրայօք սոսկումով կը խօսի ինձ, և որոնք իմ հայրս սպաննեցին, ու իր բաղդը արտասուքով և արեամբ ընկրկեցին։ Ա՛հ, ուրեմն թէ հօրս և թէ մօրս համար վրէժս պիտի լուծեմ քեզմէ. ուրեմն դուն իմ հօրաքոյրս ես, ու ես Պօրճիա մի եմ. ո՛հ, աս բանս զիս կը յիմարեցընէ։ — Մտիկ ըրէ, Տօնա Լուքրէցիա Պօրճիա, դուն երկար տարիներ ապրեցար, և քու կեանքդ այնչափ ոճիրներով ծածկուած է, որ դուն քու անձիդ ատելի և անտանելի եղած ես։ Ապրելէն ձանձրացած ես անշուշտ, ուրեմն պէտք է որ կեանքդ վճարես։ Մերինին պէս ընտանեաց մէջ, ուր ոճրագործութիւնը ժառանգական է, և անուան պէս հօրմէ յորդի կ՝անցնի, միշտ այնպէս կը պատահի որ այն ընտանիքը սպանութեամբ մը կը վերջանայ, ու այս սպանութիւնը վերջին մեղքը կ՝ըլլայ որ բոլոր միւսները կը լուայ։ Ազնուական մը բնաւ նախատուած չէ իր տանը ծաղին մէկ յոռի ոստը կտրելուն համար։ Սպանիայի Մուտարրան իր Բոտէրիկոս հօրեղբայրը սպաննեց քու ինձ ըրածներէդ շատ աւելի քիչ չարիք ընելուն համար։ Ա՛ս Սպանիային իր հօրեղբայրը ըսպաննելուն համար ամենէն գովուեցաւ, իմացա՞ր հօրաքոյրս։ — Բաւական է ուրեմն, հոգիդ Աստուծոյ աւանդէ, թէ որ Աստուծոյ և քու հոգւոյդ կը հաւատաս։

Տօնա Լուք. Ճէնարօ, գո՛ւթ ունեցիր քու անձիդ վրայ, տակաւին անմեղ ես դուն, այդ մեղաց մէջ մ՝ելնար։

Ճ՝. Մեղք մի. ո՛հ, գլուխս կը մոլորի և տակն ու վրայ կ՝ըլլայ, աս ալ մեղք մի է։ Թող մեղք ըլլայ. եթէ ես աս մեղքը գործեմ, միթէ ես Պօրճիա չե՞մ մի։ Ինկան վրայ եկու, կ՝ըսեմ, հօրաքոյրս, Ինկան վրայ եկու։

Տօնա Լուք. Բայց ստոյգ է այդ ըսածդդ, սիրելի Ճէնարօ, միթէ ան է իմ քու վրադ ունեցած սիրոյս փոխարէնը։

Ճ՝. Մէ՛ր մի....։

Տօնա Լուք. Ընկարելի՞է աս։ Կ՝ուզեմ քու կեանքդ ազատել. երդմամբ մարդ կանչեմ դրսէն։

Ճ՝. Այդ դուռը պիտի չբանաս, ու մէկ քայլ մը անդին պիտի չերթաս։ Նէ որչափ պոռաս, պիտի չիկրնաս ինքզինքդ ազատել։ Դուն քու բերանովդ չհրամայեցիր հիմա որ ներս մարդ չմտնէ, թէ և դրսէն ձայներ լսուին։

Տօնա Լուք. Բայց այդ ըրածդ վատութիւն է, Ճէնարօ, կին մը ու առանց պաշտպանութեան կին մը ըսպաննելու նուաստանաս. ո՛հ, դուն հոգւոյդ մէջ ասկէ աւելի աղնիւ ըզգացումներ ունիս. մտիկ ըրէ, թէ որ կ՝ուզես, ետքը սպաննէ զիս, ես կեանքէս ձանձրացած եմ, բայց պէտք եմ առաջ սիրոս բանալ, զոր դուն

մինչև հիմա վիշտերով լեցուցիր։ Դուն տակաւին երիտասարդ ես և տղայ, և երիտասարդութիւնը միշտ խիստ է։ Ո՛հ, եթէ ես պիտի մեռնիմ, չեմ ուզեր քու ձեռօքդ մեռնիլ, ոչ, անկարելի է որ ես քու ձեռքէդ մեռնիմ։ Դուն իսկ չես գիտեր թէ ինչ աստիճան սոսկալի պիտի ըլլայ քեզ այս։ Ըսկէ զատ, Ռէնարօ, ժամանակս հասած չէ տակաւին. ըստոյգ է որ ես շատ ոճրագործութիւններ ըրի, ու խիստ յանցաւոր եմ, ասոր համար պէտք է թողուս որ ժամանակ ունենամ ինքզինքս ճանչնալու և ըրածներուս վրայ զղջալու։ Կ'իմանաս, Ռէնարօ, անշուշտ պէտք է որ ապրիմ։

Ռ. Դուն իմ հօրաքոյրս ես. մայրս ի՞նչ ըրիր, տիկին Լուքրեցիա Պօրգիա։

Տօնա Լուք. Սպասէ, Ռէնարօ. չեմ կրնար ամէն բան ըսել. քանզի եթէ ամէն բան պատմեմ, զուցէ զիս աւելի պիտի նախատես և աւելի պիտի սոսկաս ինձմէ։ Վայրկեան մը ևս մտիկ ըրէ ինձ. ո՛հ, խնայէ իմ կեանցս, կ'աղաչեմ, որ ես ժամանակ ունենամ զղջալ ըրածներուս վրայ. ըսէ՝ ինչ կ'ուզես որ ընեմ. կ'ուզես որ աշխարհէս հրաժարիմ. կ'ուզես որ վանք մը քաշուիմ. ըսէ՝ ինձ կ'աղաչեմ. եթէ դան և պատմեն քեզ թէ աս ողորմելի կինը իր դլուխը ածիլեալ տուաւ, մոխրի վրայ կը պառկի, իր ձեռօքը իր փոսը կը փորէ, դիշեր ցորեկ Աստուծոյ աղօթք կ'ընէ ոչ իրեն համար, որուն հարկաւորութիւն ունի, այլ քեզի համար աս բաները կ'ընէ այս կինը որ դուն օր մը զթութեան նայուածքով անոր նայիս, որ դուն անոր սրտին և հոգւոյն ամէն սաստիկ վիրաց վրայ կաթիլ մը արտասուք իջեցընես, որ վերջի դատաստանին ձայնին նման խիստ ձայնով չըսես անոր, ինչպէս որ ըրիր, թէ՝ Դուն Լուքրեցիա Պօրգիան ես. թէ որ աս խօսքերը դան պատմեն քեզ, Ռէնարօ, տակաւին պիտի նախատես զան։ Ո՛հ, շնորհք ըրէ, կ'աղաչեմ, մի սպաններ զիս, սիրելի Ռէնարօ, երկուքնիս ալ ապրինք, զուն ինձ ներելու համար, ու ես զղջալու համար։ Քիչ մը զութ ունեցիր վրաս. զթութիւն խնդրող թշուառ կնոջ մը վրայ զութ չունենալը վատութիւն է։ — Զթա՛ ինձ ու կեանքս ինձ շնորհէ։ Քանզի աս սոսկալի մեղք մը և սպանութիւն մ'է։ Քեզի պէս խիստ հուժկու մարդ մը տկար կին մը սպաննէ, ո՛չ, աս աստիճան պիտի չնուաստանաս, ու պիտի չուզես աս մեղքին մէջ խնալ։

Ռ. Երեր ալ. Տիկին....

Տօնա Լուք. Կը տեսնեմ որ կը զթաս վրաս. ո՛հ, թող ինձ լամ քու ոտիցդ ներքև։

Ձայն մը, դրսէն. Ռէնարօ։

Ռ. Ո՞վ է զիս կանչողը։

Ձայնը. Եղբայր Ռէնարօ։

Ռ. Մաֆիօն է։

Ձայնը. Ռէնարօ, կը մեռնիմ. վերէժս լուծէ։

Ռ, դառնալը վերջնական. Ալ կատարեալ. այսուհետև բան մը մտիկ չեմ ըներ։ Կը լսե՞ս, տիկին, պէտք է մեռնիլ։

Տօնա Լուք. Վիճելով— անոր յիշը բռնելով. Կ'աղաչեմ, շնորհք ըրէ, տակաւին մէկ խօսք մը ունիմ։

Ռ. Ո՛չ։

Տօնա Լուք. Ներէ՝ կ'աղաչեմ, մը տիկ ըրէ՝ ինձ։

Ռ. Ո՛չ։

Տօնա Լուք. Աստուծոյ սիրոյն համար ըլլայ։

Ռ. Ո՛չ։

Կը ելնէ։

Տօնա Լուք. Ո՛հ, սպաննեցիր զիս, Ռէնարօ, ես քու մայրդ եմ։

2204
24559

2013